մարտեալ լինէր անօրինացն պատե-
րազմ: Խոկ երանելի նահատակքին՝
զմոլութիւն անօրինացն խափանե-
ցին և յաղթող դատան. քանզի՝ ո-
րոց ստացեալ էր զաստուածային
զօրութիւն, ոչ ժուժկալէր նոցա
մարմնաւորական պատերազմ: Այդ՝
քո՛ ասէ՝ սոցա բարեխօսութեամբն
խնայեա՛ ի մեզ և ողորմեա:

Օ՛ օրհնեալ և վկայ ճշմարիտ՝ քաջ նինե-
նահատակ քո՛ւր սուրբդ (Ռիփսիմէ).
որ փոխանակեցեր զմարմինդ ընդ
հոգւոյդ քոմ փրկանս. և ոչ ա-
ծեր զմտաւ զսպառնալիսն անօրէն
բռնաւորացն: Այլ վերին ազդե-
ցութեամբն դիտելով զպրեցուճն
հոգւոց նոցա, վասն այնորիկ լու-
ցեր զտառաջաւ կուռքն և անարգեցեր
զպաշտամունս նոցա: Այդ՝ ի յաղ-
թող պատերազմի սօնողացս զօր
նահատակութե՛ն քոյ, բարեխօսեա
առ աեր վասն անձանց մերոց:

Գնալով փառաց քոյ ի փառս կաք քոյ
թուղիկ եկեղեցի քո քրիստոս ծնէն

մեծապէս պայծառանայ . քանզի՝ Թագաւորեալքն ի քէն դիմեալք ի յերկինս , ի սեբաստիայ նահատակին՝ ի յամօթ և ի քարընկէց յերեսս բանսարկուին : Ոբք և քաջալերեին զմիմեանս , զի մի՛ լռեալ ոք բաղանեօք անցաւորիս պակասեցի , այլ դողալով առաքինաբար՝ զինքն ըղերձեալ ի յանիւս աստուածային դանձուցն հոլովիցի աղաղակելով առ քրիստոս : Ընդ՝ սոցա բարեխօսութեամբն՝ ընկալ և զորդեգրութիւն ժողովոյս մերոյ ի յոյս սիրոյդ քոյ՝ որ փառք քեզ :

երկ ման Որ ի վերայ քերովբէիցն հանդչիս և ի զօրացն հրեղինաց օրհնաբանիս , լիցեր ի բաբիլոն և փրկեցեր զերիս մանկունան ի հրոյն բռնութէ : Ոբք աղաղակելով դոչէին երգ նոր . ամ գործք օրհնեցէք և բարձր արարէք : Թագաւոր փառաց և արարիչ բոլորից , որ մարդասիրապէս գլեթացար ի նբ մանկունան և փրկեցեր ի բորբոքեալ բոցոյն . ոբք ա-

նարպեցին զբռնութիւն թագաւորին
և չիջուցին զպօրութիւն հրոյն. ընդ
նոսին և մեք քեզ վերագոչեմք,
փրկեա զմեզ ի հրոյն յաւիտենից։
Օ, ի դու միայն ես բազմագութ
տէր՝ քեզ վառք յաւիտեան ամէն։
Օ որ օրհնեն անլռելի ձայնիւ ի հրշ
մանաւանդ զօրութիւնք՝ երկնաւոր նա-
հապետութիւնք. հրեշտակք և հր-
բեշտակապետք. ամպոք և տէրու-
թիւնք. իշխանութիւնք և պետու-
թիւնք. սերովբէք և քերովբէք՝ և
մեք օրհնեսցուք զնոյն ամենասուրբ
երրորդութիւնն և զմի աստուածութիւն։
Այսօր երկրաւորս եկեղեցւոյ քա հրշ
հանայապետութիւն, ցնծայ հրա-
շափառապէս՝ զերկնաւոր քահա-
նայապետութեանդ կատարելով
զսօնախմբութեան տօնս։ Եւ ընդ
անմարմնականաց և հոգեղինաց դա-
սուցդ՝ և մեք մարմնականքս և հո-
գեղինքս համաձայնեալ փառաւո-
րեմք զփառաւորեցեալն ի ձէնջ։
Ընդ՝ ամ՝ ես գաբրիէլ և միքայէլ

մեծ հրեշտակապետք բարձրելոյն. և ամենայն զինուորութիւնք երկնից, որք կայք միշտ առաջի ամենառոյ աճուրդեանն. անդադար բարեխօս լերուք վասն մեր առ տէր, վերաբերել զմեզ զամենեսեան ընդ ձեզ յերկինից արքայութիւնն. և միաձայն բարբառով երգել զփառս։

ամ պէց Բարեխօսութիւք սրբոյ հռոյ աստուածածնին, սրբոյն յոհաննու կաթուղիկոսին, սրբոյն ստեփաննոսի նախավկային, և սրբոյն գրիգորի մեծոյ լուսաւորչին. և սրբոց առաքելոց և մարգարէից, հայրապետաց և վարդապետաց, մարտիրոսաց և թագաւորաց, ճգնաւորաց և կուսանաց, նահատակաց և միանձանց և ամենայն սրբոց քոց հնոց և նորոց, յայտից և անյայտից, որոց այսօր է յիշատակ. զխաղաղութիւն և զերկնային ողորմութիւն քո պարգեւեա մեզ մարդասէր տէր։

քրզ Եւ ևս խաղաղութիւն զտէրա ղաչեսցուք. ընկալ կեցո և ողորմեա։

Օրհնութիւն և փառք հօր և որդ-
ւոյ և հոգւոյն սրբոյ. այժմ և :

Խաղաղութիւն ամենեցուն :

Խրատ : Աբեթեայ, ծննդեան, պեառնընդառաջին, վարդավառին, վերափոխման, և ամենայն պօնէյ ասա-
ուածածնին՝ ճաշու- փոխն այս է :

Ընծացուսցէ անձն իմ. և այլն, 195 :
Ընտհային, ծաղկազարդին, հոգւոյ գալստեանն, խա-
չէ, եկեղեցւոյ, և ամենայն կիւրակէից՝ ճաշու-
փոխն այս է :

Տէր Թագաւորեաց՝ զվայելչութի՛
զգեցաւ, զգեցաւ տէր զօրութի՛՝
ընդ մէջ իւր էած :
Հաստատեաց զաշխարհ՝ զի մի սա-
սանեսցի. պատրաստ է աթոռ քո՝
՚ի սկզբանէ յաւիտեանս դու ես :
Ամբարձան գետք տէր, և ամբար-
ձին գետք զձայնս իւրեանց. և յա-
րիցեն գետք ՚ի գնացս իւրեանց :
Ի ձայնէ ջուրց բազմաց, սքանչելի
եղեն զբօսանք ծովու :
Սքանչելի ես դու տէր ՚ի բարձու-
նըս, վկայութիւնք քո մեք յոյժ
հաւատացաք :

Տան քոմ վայելել սրբուԹի աէր՝
ընդ երկայն աւուրս։
փառք հօր և որդւոյ և։

Օ՞պիկն ինչ՞ ի հոգւոյ գալոպան՝ այս է ճաշո-
ւին։

Գովեա երուսաղէմ զտէր։
Եւ օրհնեա զաստուած քո սիօն։
Օ՞ի զօրացոյց զնիպս դրանց քոց, և
օրհնեաց զորդիս քո ՚ի քեզ։
Ո եդ զսահմանս քո ՚ի խաղաղուԹի.
պարարտուԹիւ ցորենոյ լցոյց զքեզ։
Ընաթէ զբան իւր յերկիր, վազվազ
ընԹանան պատգամք նորա։
Դնէ զձիւն որպէս զասր, և զմէգ
որպէս փոշի ցանեաց։
Երկանէ զսառն ՚ոյզ պատառս. ա-
ռաջի ցրտոյ նորա ո՞ կարէ կեալ։
Ընաթէ զբան իւր՝ և հալէ զնոսա,
շնչեսցէն հողմք՝ և գնասցեն ջուրք։
Պատմէ զբան իւր յակոբայ, զար-
գարուԹիւն և զիրաւունս իսրայէլի։
Ոչ այսպէս արար ամ ազգաց մր, և
զդատաստանս իւրոց չյայտնեաց նոյ։

Ընդհանայն սրբոց՝ ծանէ՝ ճաշու փոխն այս է։

Սիրեցի՝ զի լսիցէ տէր զձայն աղաչից իմոց։ Ա այլն որպէս ի ԻԲ՝, 277։

Շաբաթապահից յորս պահ ոչ պահէ, և ամենայն չըբէ՛չըբաթի և ուրբաթի յորս պահ չկնի՝ ճաշու փոխն այս է։

Օրհնեցէք զտէր ամենայն ազինք. գովեցէք զնա ամ ժողովուրդք։ Ա Օ՛օրհասցի ողորմութիւն նորա ի վերս մեր. և ճշմարտութիւն տեառն մնասցէ յաւիտեան։

փառք հօր և որդւոյ և։

Եւ ապա ասի շարական ըստ ձայնից պատշաճից և կիւրակէի յարութեան։

Ճշ աձ

Օ՛ Թագաւորըն փառաց քրիստոս. ոչ վասն մեր մարմնացաւ ի սրբ- քոյ կուսէն և խաչի համբերեցուց. միաբանութեամբ երգով բարեբաշնեացուք։ Ա Որ զքաղցումն երկնքօրեայ յանձն էառ յարուցեալ ի մեռելոց ի շխանութեամբ. միաբա։ կարո-

զապէ՛ս զդրո՛նըս զբժոխո՛յ խորտա՛կ
կեաց. եկեղեցւո՛յ խըրոմ զեղցո՛ց
զմեծվայելչութիւն. միաբանու։

Հրեշտակապետաց։

դկ Ա՛յսօր ուրախացեա՛ք սո՛ք եկեղեցի՛
քրիստոսի. ոճնէ խընդո՛ւթի՛ զոճն
վերի՛ն երու՛սաղէմի՛, սըրբասաց
ձա՛յնիւ փառաւո՛րեցի՛ զդքո՛։ Ա՛յ-
սօր համաձա՛յնեա՛ք սո՛ղիք սո՛ւրբի՛
երկրայնոց. ոճնիւ զուարճա՛նան
որդւո՛ց անդրանկաց վերի՛ն սո՛ւրբի՛.
սըրբա։ Ա՛յսօր դասք անմարմնոցն
երդս առեա՛լ սարե՛ն ընդ մարդ-
կա՛ն. զերդըս հոգեո՛ւրս յանմահ
վեհասի՛ն յառագա՛ստ. սըրբա։

Մարգարէից։

աձ Ա՛ռաւգայթ ա՛նճառ լու՛սոյ ան-
քննելի՛ տէրո՛ւթիւն. յառաջա-
գո՛ն հրաշա՛ցուցեր զառաջո՛ղութիւն
մարգարէից. լիջանելո՛վ ի՛ ստորինս
աստուա՛ծային տնօրի՛նութեամբ։
Ա՛ր լզատաճա՛ր հաւատոյ հիմնե՛լ

ցուցին ընծայք սուրբ հոգւոյն. յոր եմեալ բանն աստուածն եղիցի արիւեան ճառագայթիւք. լինիցեն երեւեցեալ յաչխարհի ճշմարիտ մարդեղութեամբ. զոր քարոզեցին մեզ հրաւիրողքըն համագոյ հօր և հոգւոյն. լուսաւորելով ըզտիեզերս ճառագայթիւն տնօրինութեամբ։

Ամենայն չարեքշաբաթի պահոց և ուտեաց։

փառաբանութիւն առաքեմք քեզ հայր երկնաւոր. յիշեա՛ զնընչեցեալսըն քո։ Որ էակիցդ ես հօր և հոգւոյ՝ որդի՛դ միածին. յիշ։ Որ վարա-կիցդ ես հօր և որդւոյ՝ հոգի՛դ ճշմարիտ. յիշ։

Հինգշաբաթի Առաքելոց։

Որ սիրեցիր էք արարչին արա-ծոց քրիստոսի սուրբ առաքեալք. բարեխօսեցէք առ տէր վասըն մեր։ Որ քարոզ էք ընդհանուր տիե-զերաց քրիստոսի սուրբ առա։ Որ

պատարագ էք ամենայն եկեղեցեաց
քրիստոսի սուրբ առաջ։

դկ ուր Ո՛ր անակնդրն յերուսաղէմ եկիր յաշ-
խարհս. մարմնացար ի կուսէն յա-
զգս մերոյ պարտեաց. հաճեցո՛ւր
զնընջեցեաղսըն մեր։ Ո՛ր ի հօրէ
լուսոյ լոյս ծագեցար մեզ լո՛ւ կեանք.
մկածին որդի հօր համագոյակից.
հաճ։ Ո՛ր ի վերդ ես քան զամենս
ևս զևաւրհուրդս. և խաչի համբեր-
եալ վրդովեցեր ըզսրեղերս. հաճ։

Շաբաթապահոց՝ յորում սուրբն ոչ պահեսցին, երիւղա-
բաւի, երէքշաբաւի, հինգշաբաւի՝ զայս ասա։

գճ Քրիստոս ամատուածդ. մինչեա՛ բո՛ւ
զնընջեցեաղսըն ի նը անո՛ւնըդ քո։
Ըզգինս արեան քո տուր. մինչեա՛ բո՛ւ
ևս հանգո ընդ սո՛ւրբըքս քո։ Լու ի
մուսանգամ քո գաղթատեանն, ըզ
նընջեցեաղսըն մեր մինչեա՛ բո՛ւ ևս։

գկ ուր Ո՛ր յանէից ստեղծող գո՛ւաբո՛ւյից ա՛
րարչական հո՛ր բանդ սո՛ւրբաձ.

Թ՚ողու Թխե՛ն չնորհեա՛ նե՛ղնջեցեալց
քո՛ց ծառա՛յից . յորժամ գա՛յ ս
դա՛ռաւորեա՛լ զո՛ր ա՛նարատ ձե՛ռօք
ստե՛ղծեր ։ Ո՛ր ՚ի հօ՛րէ առաքե՛ա՛ռ
ցա՛ր , և մարմնացար ՚ի ս՛ո՛ւրբ կո՛ւսէն .
Թ՚ողու ։ Ո՛ր ՚ի խաչի՛ն անէ՛ծ նեա՛ռ
ցա՛ր , զմահ՛դ ըն՛ծեր զհիւսա՛նո՛ւ
Թխե՛ն . Թ՚ողու ։ Ո՛ր պատա՛կիչդ ե՛ս
քո՛ց սր՛ա՛ռ՛րբոց , և ա՛նեղմա՛խճան
բա՛ռեա՛ց բա՛շխող . Թ՚ողու ։

Մաթիւոսայ ։

Ա՛ղբնաւորըդ ճըշմարի՛տըդ և վերկայ՛դ
քրիստո՛սի . ո՛րք զջա՛րչարանս և զ ըզ
մահ յա՛նձն առեր վասրո՛ւն ան . ըզ
ձեզ ուսիմըդ բա՛ռեխօս ա՛ռ քո՛
վանն ա՛նձա՛նց մերոց ։ Ջա՛նզի հա՛ղ
մամբ առեա՛ն ձերոյ պայծա՛ռացա՛ն
սո՛ւրբ ե՛կեղե՛ցիք . և՛ զբաստուերա՛յ
մած խաւար կռապաշտո՛ւթեանցըն
բա՛ռնեցիք . ըզձեզ ։ Երկնայի՛ն զօրքն
իջեալ ՚ի պատիւ պատարագի՛ մահ
ուա՛ն ձե՛րոյ . և՛ բզպրսակա անսպա

կանս առբեբելով ի հօրէ լոյսոյ.
ընձեզ ունիմբք քա։

Աբեաց։

գկ Աստուածածնին խորան լուսոյ անվայրապակ արփունն կենաց, որ եղբ՝՛ր աբեւելք արեգականն արդարութե, և նըստեալցս ի խաւարի լոյս ծագեցեր. վասորչ ամենեքեան ընդբեզ միշտ մեծացուցանեմբ։ Նանպատական տաճար ևմորենի անկիզելի. որ զանշէ՛՛՛ջ հնձր ճաճուղեամնն ի քեզ տարեալ կրեցեր. որով բնութեամնս կիզեալ չիջաւ կրից բոց. վասորչ ա։ Կենդանի տապանակ կտակարանաց նորչ ուխտիս. որով ե՛՛՛լբ յերկիր աւետեաց հորդեալ, հոգւով ի քեզ տպաւորեալ բանին. վասորչ։

Ձննդեան։

գձ Սնբբ զաստուածածնին օրհնեղութե՛՛մբ մեծացուցանեմբ։ Աւետարանչ տաւղ հրեշտակն աւետարանէր,

ըզծընեաւ՞լ վրկիչն ՚ի սրբոյ կու-
սէն։ Ասէ՞ ուրախ լեր բեմրկեալդ.
քանզի տէ՛ր տերանց է՛ ընդ քեզ։

Տեառնընդառաջին։

Ա՛նըսկիզբն բանըն յանըսկըզբնա- դկ
կան ՚ի հօրէ, և սկըզբնաւոր եաւ ՚ի
կուսէն մարմնոյ զգեցմամբ, բամա-
դակե՛ալ յորմէնէ և ընդ հօր գո-
լով, և սահմանեաւ ժամանակաւ
ծընեաւ լինել ա՛՛ստըւած և մարդ։
Ա՛ըտեաւ ընդ օրինօք՝ անհւթական-
նըն հողանիւթ գոլով. զի զհողա-
ծնեաւ լքըս հօրն ընծայեսցէ. ա՛՛ծոր
դի՛՛ն որ ՚ի ծոց հօր. տղայ քառաս-
նօրեայ բառնի ՚ի գիրկըս ծերհան-
ւոյն. և յայտնապէս ծանո՛ւցանէ
ա՛՛ստը։ Վ՛ան որոյ և սիմէօն ցըն-
ծայր հոգւովն աղաղակէր ՚ի տաճա-
րին. արդ արձակե՛՛ս ըզծառայս քո
տէր ըստ բանի՛ քում ՚ի խաղաղնե-
թիւն. զի ընդհանո՛ր տեսի զըՂ
վիմրկողդ ա՛՛ստը։

Ծաղկազարդին ։

դկ Աշնակիզքըն բանըն հօր մը ի վերայ
քերթվեէ՛ցըն հանդչի. այսօր ի
վերայ յաւանակի նորոյ նըստեալ.
ծրհնեաք տըքայ եկեալ անյաղթելի
Թագաւորն ։ Յառաջ քան զյաւիտեան
տեառնա որդին որ ի վերայ քառաչ
կերպարանցըն բազմի. այսօր ի ծերոց
և ի տղայոց փառաւորեցաւ. ծրհ ։
Նկայ.ք նոր ժողովուրդք ընդ ան-
մարմնոցըն դահա բազմութեան.
ըզսա հընչմամբ երգով քաղցր
ձայնիւ փառաւորեսցուք. ծրհ ։

Զատկին ։

աձ Յարեաւ քրիստոս ի մեռե՛լոց.
ա՛լէ՛լո՛ւիա ։ Նկայ.ք ժողո՛վոգուրդք,
երգեցէ՛ք տեառն. ա՛լէ՛լո՛ւիա ։
Յարուցեալն ի մեռելոց ա՛լէ՛՛-
լո՛ւիա. որ զաշխարհըս լուսաւո՛՞-
րեաց. ա՛լէ՛լո՛ւիա ։

Համբարձման ։

աձ Ա՛ր հրամայեաձ այսօր ա՛ծային

իշխանութեան՝ ի հայրապահն՝ ի Քրիստոս
հառս, սպանաւորելոյ Քրիստոսի՝ ի հրեշ-
տակապահն դահճէն, որք նըւա-
զելի՝ն սեսելով, համբարձէ՛ զ՛ք ի-
խանք ըզդրօշնիա ձեր՝ ի վե՛ր, և
մըտցէ՛ թագաւոր փառ՛ոյց։ Հայ-
ցան՝ն վերնական իշխանութեանն,
և տակաւին ձայնիւ աղաղակէին՝ն
ասե վիմեա՛նս, զի է սա թագա-
ւոր փառաց, Տէրեալ մարմնով և
սքանչելի՝ զօրութեամբ. համբարձ։
Եղանակէին՝ն վերնականն սեստու-
թիւնքըն հրաշալի ձայնիւ, եր-
դեին երգ նորոգ առելո՛վ. սա է՛նքն
է թագաւոր փառաց, վերակից աշ-
խարհի և ազատիչ ազգի մարդկան.
համբարձ։

Հոգւոյ գալստեան։

Ար՝ի համրաշարժ՝ ի յաճախ՛ղեալ՛ն
յառաջ բըղխեալ անհատաբար՝ ի
յաճախ՛ըդ՛ւոյց տիրամարդս ընդ հոգին.
այսօր՝ ի յերկինս՛ց առ՛ատիկ հետ՛ը

եալ ՚ի գաւառս առաքելոցըն լքեցու-
ցիչ բոլորից . ըզբնահ ՚ս օրհնեա-
ցուք եւ երկրպագեցո՛ւք ։ Որ
յանբակիւզն է ՚ի միշտ ՚ի յԷՋԶՋ-
է՞ն, նմինադ՚ց բընութ՚ամբ անորիշ
բաժանմամբ ՚ի յոՋԶՋ՞րդուց ա-
րարչակից ՚ս եւ հոգին, այսօր հրամ
բաժանեա՛ր լերզուս քոյնակիցըն,
՚ի լոյս աճեալ զաղգըս մարդկա՛ն
բաժանմամբ սէր պէ՞ս չընորհաց.
ըզբնահ ՚ս օրհ ։ Որ ՚ի վերայ չո՛ւրցըն
գոՋԶՋ՞լոյ գոյացոյց զաւրաւածս,
անանձնըրպեհան ՚ի հօրէ է յոՋԶՋ՞ր-
դուց խչհանմակից ՚ս եւ հոգին . այ-
սօր վերածնեա՛ց զաղգս ՚ամ, ջրոյ
կենդանուց բըզխեալ յերուսա-
ղէմ . ըզբնահ ՚ս օրհ ։

վարդավառին ։

դկ Ո՛րախասցին պըտակ կուսիՋ՞ա՞ց
ամ՛ բահ՛մայր , այսօր ծնդի՞ն՞ն
.քո՛ղ հնայրեՋ՞ա՞նի՛ն վահ՛յկեաց
ըզխաչս . նըմա յա՛յմուէ յանձըն

ամբաւ զայ[illegible]նձինքս մեր։ Նըման մանկանց ևս հեգ[illegible]ղիւթեան սպասեն. յանձն նոքա զընծան թաքօգ[illegible]ր և հեթըմօն. նոյնա յա։ Նոսայիան ընդքեզ թեղեգ[illegible]ւ ամպ եթե տեա. և հայր յայմմոյն զքո զորդիսն իգ[illegible]ւր գանձաթե[illegible]ն եաց. նըման յա։

Փոխան Ածած ածածնին։

Ընդհաճառամ ձանզիկ, ա[illegible] պարտ շահաձիւղ վերաբանսեռ յայրմանոյն յեսսեայ. զքեզ եսայի ա՛ն կանխաս վերագիշեաց եօթն արփին ընդհունաբա՛ն զոլ. աստուածամարդին ես՝ կոյս զքեզ ըմեծացուցանեմք։ Հաճեցիր ճաշակ պըտղոյն բանաւոր բարձ՛նակ յոթմէ կիթեցաւ մեզ ոգիացն ա՛նբասած յուրախ[illegible]միր տըրտմեցեալոցն ի՛ ճաշակման նէ ծաղուցն գիտո՛ղ լեր. սըրբուհի՛[illegible]ա՛ նահատա՛ մեր նե՛քեան զքեզ մեք։

Քահանայապետել ի մարմնի անա-
րատ վարս Քրոջ. այսօր յանապելոցն
անմոռնալեաւ վերին անկարկուտ թա-
վերատոհմեցարը յարքայն Հոգի՝ որդ-
եդրի եւ այր մեր Քրոյ. բարեխօսա՝
հատոնեան՝ զացս զքեզ ը մեծա:

Խաչն:

Յաղթող եւ զնոր օրհնութի միշտ ի
բարձունս երգեսցուք. Թագա՝
երին քրիստոսի հաւատացեալ ժո-
ղովրդք: Որ երկն ի լուսաւորել
զընտրեալ որբ զեկեղեցի. և պր՝
սակեաց սուրբ խաչիւն. Նրմա ըզ
վառս երգեսցուք: Այսօր եւ մեք
տօնեսցուք զնաւակատիս որբ խա-
չին: և փր՝ րկողին մատուսցուք
փառք եւ պատիւ յաւիտեան:

Տապանակին:

Որ ի սկզբանէ խմաստութեամբ
հաստատեցեր զեկեղեցի հօր խմաս-
տութի. զոր նախանշեալ տեսու-
թեամբ նշանակեալ մովսէս խորհ

նաւն երկնահանգոյն ՚ի սինա լե-
լին. լուսաւորելով փառօքն աս-
տուծոյ: Որ ըզհոգիս մեր անապա-
կան անօրէնութեանցդ ՚ի սըրբոյ
կոչեն. տալաւորելով տապանակին
աստուածային ուխտին կտակարա-
նաց բանիւդ աստուծոյ, փառաց ա-
նեղծիդ տեղի հանդիստեան: Որ
՚ի կեանս վերադարձիր բնութեանս
դարձմամբ յարդանաւոր ծրինակե-
ցեր. և զբնութիւն մահու և
զբժոխոց կործանմամբն երիքսիւ
տապանակաւ խաչին հրաշագործ-
եալ նոր խորհելի. օրհնութիւն
քեզ տէր երգեսցեն մանկունք:

ԵԿԵՂԵՑԻ:

Որ հաստատեցեր բանիւ զերկերե- դձ
ցի քո քրիստոս, ՚ի վերայ առաքե-
լական վիմի. երգել ՚ի սմա զերգըս
հոգեւորս: Կանգնեալ ՚ի սմա սե-
ղան սըրբութեանդ, բաշխեսզմարմին
իւր և զարիւնն. և տայ ՚ի սմանէ

մեզ նախատուքիւն, ի քաղաքի
մէջայց մերոց: Լքեալ հնազունն սըր-
բոց, աղաւնակերպ երեւմամբ. ի
վերայ մարմնոյ և արեանըն տէ՛ն.
ի բժշկուքիւն հնազոց մերոց:

Հայրապետաց:

դ Այսօր երկնայինքն ընդ մեզ ոճնա-
խլմբելով զմիշտատակ ըսբ վարդապե-
տացն. որք լուսաւորեցին զհաւա-
տոյ մանկո՛ւնս, և ընդ հրեշտա-
կացըն դասս վերակարգեցան:
Այսօր առաքելոց և մարգարէիցըն
դասք, ոճնակից գոլով զբաժակ վե-
րին սիմէոնի. ի յիշատակի սուրբ
վարդապետա՛ցն. որք զիմաստից
նոցին զխորհս յայտնեցին զխոր-
հուրդ: Այսօր քահանայք և պաշ-
տօնեայք սուրբ եկեղեցւոյ, վերա-
պատուեն զմիշտատակ ըսբ վարդա-
պետացն. որով զարդարեցան երկ-
նային շնորհո՛քն. երգեն ընդ
նոսին զխաւրս յաւիտեան:

Սուրբ ձեռ, որ և հզօր, որ և անմահ։ և այն ըստ պատշաճի։ Երեցս կրկնեա։

Քրղ

Եւ ևս խաղաղութեան զտեր ա։

Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի, և հաստատութե սրբոյ եկեղեցւոյ, զտեր աղաչեացուք։

Վասն սմա սուրբ և ուղղափառ եպիսկոպոսաց, զտեր աղա։

Վասն հայրապետին մերոյ տեառն (այս անուն) կենաց և վիրկութեան հոգւոյ նորին, զտեր աղա։

Վասն վարդապետաց՝ քահանայից՝ սարկաւագաց՝ դպրաց՝ և ամենայն ուխտի մանկանց եկեղեցւոյ, զտեր աղաչես։

Վասն բարեպաշտ Թադաւորաց՝ և ձեռնասէր իշխանաց, զօրավարաց՝ և զօրաց նոցին, զտեր աղա։

Վասն հոգւոցն։ Եւ ևս։ Օգնեա։ Պաղեմեաց։

Սաղմոնք։

Օ՛ի ողորմած և մարդասէր ես ձեռ դողով. և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և

Սաղմոս ճաշոց՝ որ ասի յինանցն, յաւուրն երեք փոխ. զի մինչ ի հոգւոյ գալոցսն ճծ փոխ սաղմոս դաւթի վճարեսցի: Ընդ ամեն փոխի վերջն երեք ալէլուիա ասասցի:

Երանեալ է այր որ ոչ գնաց ի խորհուրդ: ալէլուիա. ալէլու. ալէ: Ընդէր խռովեցան հեթանոսք: ալէ: Տէր զի բազում եղեն նեղիչք: ալէ:

Համբարձմանն՝ ճաշոց սաղմոս կարդայ:

Համբարձաւ ամծ օրհնութեամբ. և տէր ձեր ձայնիւ փողոյ: Ծափս հարէք ամ հեթանոսք, աղաղակեցէք առ ամծ ի ձայն ցրնծութեան: Ա այլ. (սղ. խզ).

Ընթերցուածս ի գործոց Առաքելոց:

Զկնպես պաշտեմ զհայրենի աստուածն. հաւատացեալ ամենայնի որ ինչ յօրէնս և ի մարգարէս գրեալ է: Ունիմ յոյս առ աստուած. որում և դուքա իսկ ակնուն՝ թէ յարութիւն լինելոց է արդարոց և մեղաւորաց: Ծորում և ես իսկ ճգնիմ, անխիղճ միտս ունել առ աստուած և առ մարդիկ յամենայն

ժամ։ Ի բազում ամաց ողորմութիւն
եկիր առնել յազգդ իմ. և ետուր
պատարագիս. որովք գտին զքո
սրբեալ՝ի տաճարին։

Հոգւոյ գալստեան՝ ձայնս սաղմոս կցորդ։

Հոգի քո բարի առաջնորդեսցէ
ինձ՝ի յերկիր ուղիղ։

Տէր լուր աղօթից։ Ա այլն։ (սղ. ճխբ)։

Տասանակին՝ ձայնս սաղմոս կցորդ։

Ընդ տէր՝ի հանգիստ քո՝ դու և
տապանակ կտակի սրբութեան քո։
Զիշեա տէր զդաւիթ, և զամենայն
հեզութիւն նորա։ Ա այլն։ (սղ. ճկա)։

Վարդավառին՝ ձայնս սաղմոս։

Տէր ոմ կացցէ՝ի խորանի քում, կխը
կամ ոմ բնակեսցէ՝ի լեառն սրբ քո։
Որ գնայ անբիծ, գործէ զարդարու-
թիւն, խօսի ճշմարտութիւն՝ի
սրտի իւրում։
Որ ոչ նենգաւորեաց լեզուաւ իւ- բշ
րով, և չար ընկերի իւրում ոչ ա-
րար։
Նախատինս՝ի մերձաւորաց նա ոչ

առնու . արհատարեալ է առաջի նորա չարագործն ։

գշ Ոչ երկիւղածս տեառն փառաւորառնէ . որ երդնու ընդ ընկերի իւրում և ոչ ստէ ։

Ոչարծաթի իւր ՚ի վարձու ոչ տայ, և կաշառս ՚ի վերայ իրաւանց ոչ առնու . որ զայս արասցէ՝ նա մի սասանեսցի յաւիտեան ։

Վերափոխման առաւաձաձնին՝ ՃաշՃու սաղմոս կ՚ասէ ։

Ընդ որ ՚ի հանգիստ քո՝ դու և տապանակ կռատիւդ սրբութեան քո ։

Յիշեա տէր զդաւիթ և զամե ։

Ա այլն ։ (սղ . ՃՃա) ։

Սաբբ խաչին՝ ՃաշՃու սաղմոս կ՚ասէ ։

Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց . և եառաւ ուրախութիւն սրտից մերոց ։

Ի կարդալ իմում լուար ինձ աստ ։

Ա այլն ։ (սղ . գ) ։

Շաղակաթին և այլոց եկեղեցեաց ածին՝ ՃաշՃու սաղմոս կ՚ասէ ։

Ընտրեաց Հիմնունս էարկ նմա յաւիտեան . ընկալաք ՚ած զղղորմութիւն քո ՚ի մէջ ժողովրդեան քոյ ։

Մեծ է տէր, և օրհնեալ է յոյժ
ի քաղաք աստուածոյ մերոյ, ի լեա-
ռըն սուրբ նորա : Ա այլ : (սղ. խե) :

Աւետեաց Աստուածածնին՝ ձայնս սաղմոս կցորդ :

Տէր տացէ զբան, ոյք աւետարա-
նեն զօրութիւն մեծ բազմաւ :
Յարիցէ աստուած՝ և ցրուեսցին
ամենայն թշնամիք նորա, փախիցեն
ատելիք նէր յերեսաց : Ա այլն : (սղ. կէ) :

Ծննդեանն Քրիստոսի՝ ձայնս սաղմոս կցորդ :

Տէր ասաց ցիս՝ որդի իմ ես դու,
և ես այսօր ծնայ զքեզ :
Ընդէր խռովեցան հեթանոսք, և
ժողովուրդք խորհեցան ի սնոտիս :
Ա այլն : (սղ. բ) :

Քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի՝ ձայնս սաղմոս կցորդ :

Տեսին ամենայն ծագք երկրի զը-
փրկութիւն աստուծոյ մերոյ :
Օրհնեցէք զտէր յօրհնութիւն
նոր, զի սքանչելիս ա : Ա այլն : (սղ. զէ) :

Մեծի սրբոյ Ամենայնի՝ ձայնս սաղմոս կցորդ :

Լերինք ցնծասցեն առաջի տեառն,
զի գայ զի հասեալ է տէր ի դա-
տել զերկիր :

Օրհնեցէք զՏէր յօրհնուածին նոր . զի ։
Ե այլն ։ (սղ . զէ) ։

Հասարակաց կիւրակէից՝ Ճաշու սաղմոս ։

Վասն զի վայելէ օրհնութիւն աստուած ի սիոն . և քեզ տացին աղօթք յերուսաղէմ ։
Լուր աղօթից իմոց , զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ ։
Խանդ անօրինաց զօրացան ի վերայ մեր . և զամբարշտութիւնս մեր դու քաւեսցես ։
Երանի զոր ընտրեցեր և ընկալար , և բնակեսցին ի գաւիթս քո ։
Լցցուք մեք ի բարութենէ տանքո . սուրբ է տաճար քո՝ սքանչելի արդարութեամբ ։
Լուր մեզ աստուած փրկիչ մեր , յոյս ամենայն ծագաց երկրի , և որ ի ծով հեռի ։
Ո պատրաստէ զլերինս զօրութիւն իւրով . և զգեցեալ է զօրութիւն ։
Ո խաւսեցուցանէ զմեծուն ծովու , և զձայն ալեաց նր ցածուցանէ ։
Խաւսեսցին հեթանոսք , և երկիցեն

բնակիչք երկրի ՚ի նշանաց քոյ։
Յելս առաւօտու՝ ընդ երեկոյս զուարճասցին. հայեցար յերկիր՝
արբեցուցեր զնա, և բազում ա-
բարեր զմեծութիւն նորա։
Ցետն այ լի եղեւ ջուրբ. պատ-
րաստ արարեր զկերակուր նորա,
զի այսպէս է պատրաստութիւն։
Ջակօս նորա արբեցուցեր, և բա-
զում արարեր զարմանիս նորա։
Ի ցօղել նորա զուարթ եղիցի բոյս
նորա. օրհնեսցի սկսակ տարւոյ
քաղցրութեան քոյ։
Դաշտք քո լցցին պարարտութ-
պարարտասցին գեղեցկութիւնք ա-
նապատի։
Բլուրք զցնծութիւն զգեցցին, և
զգեցցին խոյք մաքեաց։
Հովիտք բազում արասցեն զցոր-
եան աղաղակեսցեն և օրհնեսցեն։

Հրեշտակապետաց՝ Ճաշու սաղմոս կցորդ։

Ո՞ արար զհրեշտակս իւր յոգիս, և
զպաշտօնեայս իւր ՚ի հուր կիզեղոյ։
Օրհնեա անձն իմ զտէր. տէր Ած

իմ մեծ եղեր յոյժ : Ա այլն . (սղ . ճգ) :

Առաքելոց և մարգարէից՝ ճաշու սաղմոս կարդ :

Բնդ ամենայն երկիր եւ բարբառ նոցա , և մինչև ի ծագս աշխարհի են խօսք նոցա :

Երկինք պատմեն զփառս աՅ , և զարարածս ձեռաց նորա պատմէ հաստատութիւն : Ա այլն . (սղ . ժը) :

Հայրապետաց և վարդապետաց՝ ճաշու սաղմոս կարդ :

Քահանայք քո զգեցցին զարդարութիւն , և սքանչ քո ցնծալով ցնծասցեն : Յիշեա տէր զդաւիթ , և զամենայն հեզութիւն նորա :

Որպէս երդուաւ տեառն . և ուխտեդ աՅ յակոբայ : Ա այլն , (սղ . ճլա) :

Համօրէն Սարթղոմէոսի՝ ճաշու սաղմոս կարդ :

Պատուական է առաջի տեն մահ սրբոց իւրոց . ո՛ տէր ես ծառայ քո եմ , ծառայ և որդի աղախնոյ քո : Ձաւետացի զոր և խօսեցայ , և ես խոս : Ա այլն . (սղ . ճժե) :

Ցհովհաննու առաքելոյն ի կաթուղիկէից առաջին Թղթոյն է ընթերցուածս : (գ . 1)

Սիրելիք՝ սիրեացո՛ւք զմիմեանս , զի

սէր յաստուածոյ է. և ամենայն որ սիրէ՝ յաստուածոյ է ծնեալ՝ և ճանաչէ զաստուած: Որ ոչն սիրէ՝ ոչ ճանաչէ զաստուած, զի Աստուած սէր է: Ասէ զի յայսմ երևեցաւ սէրն աստուծոյ ՚ի մեզ, զի զորդին իւր միածին առաքեաց յաշխարհ, զի եղիցուք նովաւ կենդանիք: Այսմ է սէրն. ոչ զի մեք սիրեցաք զաստուած՝ այլ զի նա սիրեաց զմեզ, և առաքեաց զորդին իւր ՚ի քաւութիւն մեղացն մերոց: Սիրելիք՝ եթէ աստուած այնպէս սիրեաց զմեզ, ապա և մեք պարտիմք զմիմեանս սիրել: Զաստուած ոչ ոք երբեք էնք տեսեալ. եթէ սիրեսցուք զմիմեանս՝ աստուած ՚ի մեզ բնակէ, և սէր նորա ՚ի մեզ կատարեալ է: Ընդ այսմիկ գիտեմք, եթէ մեք ՚ի նմա բնակեալ եմք՝ և նա ՚ի մեզ, զի ՚ի հոգւոյն իւրմէ եա մեզ: Եւ մեք տեսաք՝ և վկայեմք զի հայր առաքեաց զորդին իւր փրկիչ աշխարհի: Որ որ խոստովանեսցի

ցի՝ եթէ յիսուս է որպէս աստուածոյ, աստուած ՚ի նմա բնակէ՝ և նա յաստուած։ Եւ մեք հաւատացաք՝ և ծանեաք զսէրն աստուածոյ՝ զոր ունի առ մեզ։ Աստուած սէր է, և որ կայ ՚ի սէրն՝ բնակեալ է յաստուած, և աստուած ՚ի նմա բնակէ։ Յայսմիկ կատարեալ է սէրն նորա ՚ի մեզ. զի համարձակութիւն ունիցիմք յաւուրն դատաստանի։ Ո՛չ որպէս և նայն է՝ նոյն պէս և մեք եմք յաշխարհի յայսմիկ։ Երկիւղ ոչ գոյ ՚ի սէր, այլ սէրն կատարեալ ՚ի բաց մերժէ զերկիւղն. զի երկիւղ ընդ տանջանօք է. իսկ որ երկնչին, չէ կատարեալ ՚ի սէրն։ Մեք սիրեացուք զնա, վասն զի նա նախ սիրեաց զմեզ։ Եթէ ոք ասիցէ՝ եթէ սիրեմ զաստուած, և զեղբայր իւր ատիցէ, սուտ է. որ ոչ սիրէ զեղբայր իւր՝ զոր տեսանէ, զաստուած զոր ոչն ետես՝ զինա՞րդ կարիցէ սիրել։ Եւ զայս պատուէր ունիմք առ ՚ի նմանէ, զի որ

սիրէ զաստուածն՝ սիրէ նա և զեղբայր իւր ։

Մեկեգիք՝ ճաշու յինանցն զինի գործացն . ի չորեքշաբաթին սկսեալ ։

դշ Գովեա երուսաղէմ զտէր ։
Եւ օրհնեա զքո ։ Ա այլն ։ (սղ . ճխէ) ։

եշ Բարձր արարէք զտէր ամէն մեր . եր-
կիրպագէք ի լեառն սուրբ նորա ,
զի սուրբ է տէր ամէն մեր ։
Տէր թագաւորեաց , բարկացան ժո-
ղովուրդք . որ նստիս ի քրովբէս ,
սասանեցաւ երկիր ։ Ա այլն ։ (սղ . ղբ) ։

ուբ Տեսին ամէնծագք երկրի զփրկու-
թիւն ։
Օրհնեցէք զտէր ։ Ա այլն ։ (սղ . ղէ) ։

շբ Ածուցած ողորմեա մեզ և օրհնեա
զմեզ . երեւեցո զերեսս քո ի մեզ
և ողորմեա մեզ ։
Ճանաչել յերկրի զճանապարհս քո ,
յազինս ամէնփրկու ։ Ա այլն ։ (սղ . կզ) ։

կեր Փրկեզ վայելէ օրհնութիւնն ածի ։
Ա այլն ։ (սղ . կդ) ։

բշ Փրկեզ վայելէ օրհնութիւնն ածի ։
Ա այլն ։ (սղ . կդ) ։

դշ Տէր որպէս զինու հաճութեամբ
քոյ պատուիրեցեր զմեզ ։
փ Բանից իմոց ուն ։ Ե այլ ։ (սղ. ե) ։

Յերկրորդ ծաղկազարդին ընթեռնանի ։

Ընթերցուածս յԵսայեայ մարգարէէ ։ (կգ . 1 ։)

Խոկ այս ահ է որ դիմեալ գայ յե-
դովմայ . կարմրութիւն ձորձոց իւ-
րոց ՚ի բոստրայ . գեղեցիկ պատմու-
ճանաւ և բուռն զօրութ ։ Ես խօ-
սեմ զարդարութիւն և իրաւունս
փրկութեան ։ Վասն էր կարմիր են
ձորձք քո . և հանդերձք քո իբրեւ
հնձանահարի լեալ հնձանի կոխե-
լոյ ։ Հնձան հարի միայն . և ՚ի հե-
թանոսաց ոչ ոք էր ընդ իս ։ կոխե-
ցի զնոսա սրտմտութեամբ՝ և ճըմ-
լեցի զնոսա բարկութեամբ՝ և ի-
ջուցի յերկիր . և զաւետն հան-
դերձս իմ թաթաւեցի ։ Օ՛ի հաս-
եալ էր ՚ի վերայ նոցա օր հատուց-
ման . և ամ փրկութեան եկեալ
հասեալ ։ Հայեցայ՝ և ոչ ոք էր որ
օգնէր . զմտաւ առի՝ և ոչ ոք էր

որ ՚ի Թիկունս հասանէը. վրկեաց
զնոսա բազուկ իմ և սրտմտութի
իմ միայն զէմ կալաւ։ Լոխեցի ըզ
նոսա բարկութիբ իմով. և զենի զնո
սա սրտմտութեամբ իմով. և ի
ջուցի զնոսա յերկիր։

Սենեկիք՝ ճաշու՝ պահոց և շաբաթապահոց, նախ քան զԷջքն։

Ա ջքայութիւն քո աբքայութիւն իւր
ամ յաւիտենից. և տէրութիւն
քո ազգէ մինչեւ յազգ։
Հաւատարիմ է ամ յամ բանս իւր,
և արդար է յամենայն գործս իւր։
Ներկիրպագից ՚ի տաճար սուրբ քո
երկիւղիւ քո տէր։
Պարծեսցին ՚ի քեզ սիրելիք անուան
քո, զի օրհնեսցես դու զարդարն։
կեցո զծառայս քո աստուած իմ,
որ ՚ի քեզ յուսացեալ։
Աղօթեա ինձ տէր, զի առ քեզ ա
զաղակեցի զօրհանապազ։
Խարճր արարէք զտէր ամ վեր. երկ
կիրպագէք պատուանդանի ոտից
նորա՝ զի սուրբ է։
Տէր Թագաւորեաց, բարկացան ժո

ղովուրդ.ք. որ նաախա 'ի քրովքէս, ասասանեցաւ երկիր։

ուբ Տեսին ամենայն ծագ.ք երկրի զՔ
վրկուԹիւն աստուծոյ մերոյ։

փ Օրհնեցէք զտէր յօրհնուԹի՛ նոր, զի սքանչելիս արար։

Սկսեալք՝ ՃաշՈ. ագից։

բշ Պարձո զերեսաց.քո՛ի մեզայ խմոց, և զՅամ անօրէնուԹիս իմ.քաւեա յինէն։

փ Ողորմեա ինձ ՈՁ ըստ մեծի ողոր
մուԹ.քումդ. ըստ բազում գԹուԹ
.քումդ քաւեա զանօրէնուԹիս իմ։

գշ Երանի՛ ումմէն՝ որ.ք երկնչին 'ի ՈՁնէ, և գնան 'ի ճանապարհս նորա։

փ Ո.վաստակս ձեռաց.քոց կերիցես, երանի է.քեզ, և բարի եղիցի։

դշ Մի՛ Թողուր զիս տէր ՈՁ իմ. և մի՛ 'ի բացեայ առնիր յինէն, հայեաց յօգնել ինձ՝ տէր փրկուԹիւն իմոյ։

փ Տէր առաջի.քո է ամենայն ցան
կուԹիւն իմ. և հեծուԹիւն իմ 'ի քէն ոչ ծածկեցաւ։

եշ Մի՛ ընկենուր զիս տէր 'ի ժամանակի ծերուԹեան. 'ի պակասիլ զօրու

լեան լմոյ մի լեղուր զնս։
Ի քեզ տէր յուսացայ, մի ամաչե-
ցից յաւիտեան. յարդարութեան
քում փրկեա և ապրեցո զնս։
Ականջս ինդրուածք իմ առաջի
քո տէր. ըստ բանի քում համա-
տուն արա զնս։
Ձայնի իմում լուր տէր՝ ըստ ողոր-
մութեան քում. և յիրաւունս քո
կեցո զնս։

Մեկնիք՝ Ճաշու Ցարութեան։

Ամենայն երկիր երկրպագեն քեզ.
սաղմոսասացեն քեզ, և սաղմոս
ասասցեն անուան քում։
Ընդակեցէք առ Ած համ երկիր.
սաղմոս ասացէք անուան նորա. և
տուք զփառս օրհնութեան նորա։
Ասեք առաջի Աստուծոյ. ընդ
արարածս քո ի մեծութենէ զաւրու-
թեան քո։
Օրհնեցից զտէր յամ ժամ, յամ
ժամ օրհնութիւն նո ի բերան իմ։
Օրհնեցէք զտէր յօրհնութի նոր.
օրհնեցէք զտէր համ երկիր։
Օրհնեցէք զՏէր և օրհնեցէք զանուն

նորա. աւետարանեցէք օր ըստ օրէ
ղկիրկուԹիւն նորա։
բկ Օրհնեցէք զՅԾ մեր. և սաղմոս ա-
սացէք անուան նորա. ճանապարհ
արարէք այնմիկ՝ որ նստի ընդ արև-
մուտս, և տէր է անուն նորա։
փ Տէր աստուած օրհնեալ՝ օրհնեալ
տէր զօրհանապազ, առաջնորդեա-
ցէ մեզ աստուած փրկիչ մեր։
գձ Մեծ է տէր, և մեծ է զօրուԹի նո-
իմաստուԹեան նորա ոչ գոյ բաւ։
փ Օրհնեցէք զտէր՝ զի բարի է սաղ-
մոս. աստուածոյ մերում քաղցր և-
ղիցի օրհնուԹիւն։
գկ Սաղմոս ասացէք ՅՀ մերում, սաղ-
մոս ասացէք Թագաւորին մերում.
սաղմոս ասացէք։
փ Ծափս հարէք ամենայն հեԹա-
նոսք, աղաղակեցէք առ աստուած
՚ի ձայն ցնծուԹեան։
գձ Սուրբ է տաճար քո սքանչելի ար-
դարուԹեամբ։
փ Քեզ վայելէ օրհնուԹի ՅԾ ՚ի սիօն։
և քեզ տացին աղօԹք յԵՀմ։

Ա յսօր է զոր արար Տէր. եկայք ցընծասցուք և ուրախ եղիցուք ի սմա: դկ
Խոստովան եղերուք Տեառն. զի բարի է. զի յաւիտեան է ողորմութիւն նորա: փ

Մեսեդիք Աղից կիւրակէից:

Ուխտս գիք և կատարեցէք Տեառն այժմերոյ՝ ամբն որք շուրջ էք զնովաւ: Յայտնի է ի հրէաստանի ած, և յիսրայէլ մեծ է անուն նորա:

Սաղմոսիք մեծի Ութաբաժնի Ճաշուն:
Առաջին սաղմոս. դ:

Յարեան ի վէր իմ վկայք չարաց. և զոր ինչ ոչ գիտէի՝ հարցանէին ցիս: Դատեա տէր զայնոսիկ՝ որք դատեն զիս. մարտիր ընդ այնոսիկ, որք մարտնչին ընդիս:

Երկրորդ սաղմոս. լէ:

Ես ի տանջանս պատրաստ եմ. և ցաւք իմ առաջի իմ են յամ ժամ: Տէր մի սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս. և մի բարկութեամբ քով խրատեր զիս:

Երրորդ սաղմոս. խ:

Ատանէր տեսանել զնանրութիւնն, խօսէր ի սրտի իւրում. և ժողո-

վէր զանօրէնութիւն յանձն իւր։
Երանի որ խորհի զաղքատն և զտըկ-
նանկն. յաւուր չարի փրկէ զինա՛ւր։

Չորրորդ սաղմոս. խա։

Բաժանեցին զհանդերձս իմ՛ի մէջ
իւրեանց. և՛ի վերայ պատմուճանի
նի իմոյ վիճակս արկանէին։
Ըղձ ա՛ծ իմ՝ նայեաց առ իս. ընդ էր
թողեր զիս. հեռի եղէ՛ի փրկութե՛ն
իմմէ՝ վասն բանից յանցանաց իմոց։

Հինգերորդ սաղմոս. լ։

Ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ։
Ի քեզ տէր յուսացայ, մի՛ ամաչե-
ցից յաւիտեան. յարդարութե՛ան
քում փրկեա և ապրեցո զիս։

Վեցերորդ սաղմոս. կը։

Լատուն՛ի կերակուր լինէ լեզի. և
՛ի ծարաւ իմ ալբուջին լինէ քացախ։
Կեցո զիս ա՛ծ, զի հասին ջուրք
յանձն իմ. ընկլայ ես՛ի խորս ան-
դնդոց, ուր ոչ գոյ լինէ հանգիստ։

Եօթներորդ սաղմոս. ձէ։

Ընդէ՞ ես որպէս մարդ առանց օգ-
նականի, և՛ի մեռեալս ազատ։

Տէր ած փրկութիւնն իմոյ, ՚ի տուէ կարդացի և գիշերի առաջի քո։

Ողիերգք սաղմոս. ճա։

Կցեցաւ ոսկր իմ ՚ի մարմին իմ. նմա նեցայ ես հաւասատան անապատի։ Տէր՝ լուր աղօթից իմոց. աղաղակ իմ առ քեզ եկեսցէ. և մի՛ դարձուցաներ զերեսս քո ինէն։

Պօղոսի առաքելոյն՝ ՚ի Տիմոթէոսի առաջին թղթոյն և ընթերցուածս։

Պօղոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի՝ ըստ հրամանի փրկչին մերոյ աստուծոյ՝ և Քրիստոսի Յիսուսի յուսոյն մերոյ. տիմոթէոս որդւոյ սիրելւոյ հաւատովք, շնորհք ողորմութիւն խաղաղութիւն յաստուծոյ հօրէ և ՚ի տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ։ Որպէս աղաչեցի զքեզ կալ յԵփեսոս՝ մինչ երթայիմ ՚ի մակեդոնիա. զի պատուիրէր տացես ոմանց չլինել օտարուսմունս, և չհայել յառասպելս և ՚ի տոհմաթիւս անչափս. որ մա-

նաւանդ խնդիրս յուզեն, և ոչ զանաեսութիւն աստուծոյ հաւատովք: Քանզի զլուխ պատուիրանին սէր է, ՚ի սուրբ սրտէ՝ և ՚ի մտաց բարեաց՝ և յանկեղծաւոր հաւատոց: Զորոց ոմանք վրիպեցան՝ խոտորեալք յունայնութիւն բանից: Կամին լինել վարդապետք օրինաց. ինքեանք ոչ իմանան զինչ խօսին՝ և ոչ վասն որոց պնդեալն են: Գիտեմք՝ եթէ բարւոք են օրէնք՝ եթէ ոք զնոսա օրինաբն կրեսցէ: Այլ զայս գիտասցէ՝ զի ՚ի վերայ արդարոց օրէնք ոչ կան, այլ ՚ի վերայ անօրինաց և անհնազանդից՝ ամբարշտաց և մեղաւորաց՝ անսրբոց և պղծոց, զհայր և զմայր անարգողաց, մարդասպանաց, պոռնկից, արուադիտաց, մարդեղուզաց, ստացող, ստերդմանց. և եթէ այլ ինչ իցէ հակառակ ողջամիտ վարդապետութեան՝ որ ըստ աւետարանի փառաց երանելոյն Աստուծոյ է, որում եղէ ես հաւատարիմ:

Աւետիսյաց Հաշտ. առ ուղղ պահոց ։ որք ասին ըստ Ձայնից ։

ա՛ոդի քո բարի՝ առաջնորդեսցէ
լինի՛ ի յերկիր ուղիղ ։

կամ Վա՛ն անուան քո տէր՝ կեցուսցես զիս , արդարութեամբ քով հանցես ի նեղութենէ զանձն իմ։

ակ Տէր մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս , և մի՛ բարկութեամբ քով խրատեր զիս ։

կամ Ողնացս իմ ուղիղ արա՛ լինի ըստ բանի՛ քում. և մի՛ տիրեսցեն լինի ամենայն մեղք ։

բա Միրա իմ խռովեցա՛ յիս , և երկիւղ մահու անկա՛ ի վերայ իմ։

բկ Դարձ տէր և փրկեա՛ զանձն իմ. կեցո զիս տէր ըստ ողորմութեան քում։

գա Վա՛ն անուան քոյ տէր քաւեա՛ զմեղս իմ, զի բազում եղեն յոյժ ։

գկ Ողորմեա՛ լինի՛ տէր զի հիւանդ եմ եա՛, բժշկեա՛ զանձն իմ, զի խռովեցան ոսկերք իմ։

գա Յիշեա՛ տէր զգիժութիւն քո , և զողորմութիւն քո՝ որք են յաւիտենից ։

կամ Ո՛վ Տէր մանկութեան իմոյ՝ և զանդիտութեան իմոյ մի՛ յիշեր. այլ յիշեա զիս ա՛ստ ըստ ողորմութեանդ քումմ՝ վասն քաղցրութեան քոյ. զի քաղցր և ուղիղ ես։

դկ Տէր՝ ողորմութիւն քո յաւիտեան. զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ։

կամ Ո՛վ Տէր մանկութե՛ն իմոյ։ որպես՝ ի վերոյ։

կամ Ընդունելի առ քեզ ա՛ստ՝ և ասացի, զոր ես յոյս և բաժին իմ յերկրին կենդանեաց։

Ալէլուիա՛ շաբաթապահոց։ Երկոքաբին, Երեքշաբաթի և Չինգշաբաթի՝ երբ աճի՛դկ լինի՝ ղայսոքիկ ասա։ Իսկ երբ յայլոյն՝ զերեանդն ասա։

բշ Ընկայք ցնծասցուք ի տէր, աղաղակեսցուք առ ՚ած փրկիչ մեր։

գշ Երգեցէք աստուծոյ երգ նոր. ծանայեցէք տեառն ուրախութի՛ւ։

եշ Բարձր արարէք զտէր աստուած մեր. երկիրպագէք պատուանդանի ոտից նորա զի սո՛ւրբ է։

Աւետիս Ագեից կուրակեց։

Աղաղակեցէք առ տէր ամ երկիր.
ծառայեցէք տեառն ուրախութիւ։
Մտէք առաջի նորա ցնծութեամբ.
Ո՛չխին լման ասա։ Տէ՛ս երես 312։

Աւետիսյ՝ Ճաշու Յարութեան քան ձայնին։

ա՛ձ Ղու յարուցեալ զԹատցիս ՚ի վէ-
րայ սիօնի. ժամանակ զԹալոյ նո-
րա հասեալ է ժամ։

կամ Թագաւոր մեծ ՚ի վերայ ամենայն
երկրի աստուած է. սաղմոս ասա-
ցէք նմա խնամութեամբ։

ակ Օրհնեցէք զտէր յօրհնութի՛ն նոր.
օրհնութիւն նմա յեկեղեցիս ասց։

բձ Ծափս հարէք ամենայն հեթա-
նոսք, աղաղակեցէք առ աստուած
՚ի ձայն ցնծութեան։

կամ Ընտրած դու դարձեալ կեցուս-
ցես զմեզ. և ժողովուրդ քո ու-
րախ եղիցի ՚ի քեզ։

բկ Երի տէր ամ խնդ ՚ի հրամանս քո՝
զոր պատուիրեցեր. և ժողովք ժո-
ղովրդոց շուրջ եղիցին զքեզ։
Վ՚ այսօրիկ ՚ի բարձունս դարձ տէր։

գձ Ուրախ եղիր խրայել յարարիչ իւր. որդիք սիովնի ցնծասցեն ի թա-
գաւորն իւրեանց։

գկ Լկայք և տեսէք զգործս աստու-
ծոյ, որպէս զի ահեղ են խորհուրդ-
դովք քան զմարդկան։

գձ Չաճեցար տէր ընդ երկիր քո, և
դարձուցեր զգերուրձի յակոբայ։

գկ Յարեաւ ձա՝ և ցրուեցան ամե-
նայն թշնամիք նորա, փախիցեն ա-
տելիք նորա յերեսաց նորա։

Ջաւակին։

Հասեալ կայի՛ն ոտք մեր առ դր-
բունս քո երուսաղէմ։

Ակնարկք Ջաւակի, Յարութեան և Յինանց Հաշու
աւետարանի։

զսա Գովեա եհ՛մ զքեզ. և օրհնեա զքո՛ծ.
կիր Օ՛գոին լման ասա։ Տես երես 390։

բշ Գովեա եհ՛մ զքեզ. և օրհնեա զքո՛ծ.
և այլն որպես ի վերոյ։

գշ Տէր ի զօրութեան քում ուրախ
եղիցի թագաւորն. ի փրկութեան
քում ցնծասցէ յոյժ։

Օ՛գոին լման ասա։ (սղ. ի)։

դշ Թեզ վայելէ օրհնութի՛ ած՛ի սիօն.
և այլն: Տե՛ս երես. 410:

եշ Տո՛ղ կացցե՛ ի խորանի քո՛ս. կամ.
և այլն: Տե՛ս երես. 74:

ուբ Տէր Թագաւորեաց՝ վայելչութի՛ն.
և այլն: Տե՛ս երես. 389:

չնե Ջնծացէ՛ք առ աստուած, օգնական է մեր. աղաղակեցէ՛ք առ աստուած յակոբայ:

Ընդ՛ք սաղմոս, և տո՛ւք օրհնութի՛ն. սաղմոս ասացէ՛ք նմա՛ ի ձայն քաղցրութեան:

Փող հարէ՛ք ի՛ գլուխս ամսոյ, յաւուր նշանաւորի տաբեկանաց մերոյ:

Հրաման է այս իսրայէլի, և իրաւունք են աստուծոյ յակոբայ:

Վկայութիւնն յոսէփու՝ զոր եդ ընդ նմա. որպէս ելանէր նա յերկրէն եգիպտացւոց, լեզու զոր ոչ գիտէր՝ լսաւ:

Ի բաց արար՝ ի բեռանց զթիկունս նորա. և զձեռս նորա յորթ և՛ ի թիւ ծառայելոյ:

ի նեղութեէ կարդացեր առ իս՝ և
փրկեցի զքեզ։ լուայ քեզ՝ի գաղտ
նութէ մրրկին, և փորձեցի զքեզ՝ի
վերայ ջուրցն հակառակութեան։
Լսեր ժողովուրդ իմ և վկայեմ
քեզ. և իէլ՝ թէ լսիցես ինձ։
Մի՛ և այ եղիցին քեզ աստուածք առ
ժամայնք. և մի՛ երկիրպագանիցես
դու աստուծոյ օտարի։
Ես եմ տէր ած քո՝ որ հանի զքեզ
քեզ յերկրէն եգիպտացւոց. բաց
զբերան քո՝ և լցից զդա։
Ժողովուրդ իմ ոչ լուաս ձայնի իմ
մեա՛մ, և իէլ յիս ինչ ոչ նայեցաւ։
Խարձի թողի զնա՛ ըստ երծալ զհետ կա
մաց սրտից իւրեանց. զի գնացին
նոքա ըստ կամս անձանց իւրեանց։
Օ՛ի թէ ժողովրդեան իմոյ լսեալ
էր ինձ, կամ իսրայէլ զճանապարհս
հըս իմ գնացեալ էր։
Ոչ զսկինչ խոնարհ արարեալ էր իմ
զթշնամիս նոցա, և՛ի վե՛ր նեղչաց
նոցա արկեալ էր զձեռն իմ։
Թշնամիք տեն ատելին նմա, և եղիւ

ցին ժամանակք նոցա յաշխարհի։
Կերակրեաց զնոսա ՚ի պարարտու-
թենէ ցորենոյ, և ՚ի վիմէ մեղր յա-
գեցոյց նոցա։

Նոր կիւրակէին. մինչեւ ց՚Համբարձումն յամ կիւրակէի։

Պռովեա երուսաղէմ զաէր. և օրհ.
Օ՚փոխն լման ասա։ Տես երես 390։

Աւետիս Համբարձմանն Քրիստոսի. մինչեւ ՚ի Գալստա
Հոգւոյն սրբոյ։

Համբարձէք իշխանք զդրունս ձեր
՚ի վեր. համբարձցին դրունք յաւի-
տենից, և մտցէ Թագաւոր փառց։

Աւետեսյք ճաշու Հոգւոյն սրբոյ Գալստեան։

Պղծմանէ Թեամբ տեառն լի եղեւ երկիր, և բանիւ տեառն երկինք հաստատեցան. և հոգւով բերա-
նոյ նորա ամ զօրութիւնք նոցա։
Եկայք ցնծացուք ՚ի տէր, աղաղակ
կեցցուք առ ՚ած փրկիչ մեր։
Երգեցէք տեառն երգ նոր. ծառա-
յեցէք տեառն ուրախութեամբ։
Ասան անուան քո տէր՝ կեցուսցես
զիս, արդարութեամբ քով հանցես

'ի նեղութենէ զանձն իմ։

եշ Աղօթեա ինձ տէր զի հիւանդ եմ
ես. բժշկեա զանձն իմ, զի խըռո-
վեցան ոսկերք իմ։

ոե Յիշեա տէր զդաւթի և զամենայն
հեզութիւն նորա։

շոբ Յեկեղեցիս օրհնեցէք զՅն, և զտէր
յաղեբեցան խորհեցիլ։

Առաքեալ Տապանակին։

Ելի տէր 'ի հանգիստ քո՝ դու և
սուրբ տապանակ կտակի սրբութեան քո։

Առաքեալք ճաշու Աւետիքսրութենէն Քրիստոսի, որ
կոչի Վարդավառ։

կեր Ամպ լուսաւոր հովանի լինէր նոյ.
ձայն եղև յամպոյն՝ որ ասէ, դա է
որպէս իմ սիրելի ընդ որ հաճեցայ։

քշ Բարձրութիւնք լերանց նորա են.
նորա է ծով՝ և նա ստար զինա, և
զգամանք ձեռք նորա ստեղծին։

կամ Նիկայք երկիրպագցուք նմա. անկ-
ցուք և լացցուք առաջի տեառն
արարչին մերոյ։

գշ Քո են երկինք՝ և քո է երկիր. զաշ-
խարհս լիս խոտ դու հաստա-

տեցեր. զՀիւսիս և զՀարաւ դու
ստուերը. Թաբոր և Հերմոն յա-
նուն քո ցնծասցեն։

Աղբսխա Ճաշու Նաւակատեաց Խաչի և Եկեղեցւոյ։

Ա Սիրեաց տեր զսիօն, և ընտրեաց զբ
բնակիլ ՚ի նմա. ասէ՝ այս է Հանգ
գիստ իմ յաւիտեանս յաւիտենից,
՚ի սմա բնակեցայց՝ զի հաճեցայ
ընդ սա։

Տուր զօրութիւն ծառայի քո. կե- կիր
ցո զօրդի աղախնոյ քո. և արա տա
խս նշան բարութեան։

Նշոյր երկիւղածաց քոց նշան, զի բշ
ապրեսցին յերեսաց աղեղան։

Սիրեաց տեր զսիօն, և ոչ ՚ի գէշ
Տէր սիրեցի զվայելչութիւն տան դշ
քո, և զտեղի յարկի փառաց քոց։

Որպէս սիրելիք են յարկք քո տէր եշ
զօրութեանց. ցանկայ և վախճաքի
անձն իմ ՚ի գաւիթս քո։

Սիրտ իմ և մարմին իմ՝ ցնծասցէ
առ աստուած կենդանի։

Նշոյր երկիւղածաց ոչ ՚ի չէր։ ուբ
Որպէս փրկեցան սիրելիք քո. կեցո զբ

աջով քո և լուր մեզ։

եկղ Հմուռնք նորա ի լեառն սուրբ նո-
րա. սիրէ ՚ր զդրունս սիօնի առա-
ւել քան զամ յարկան յակոբայ։

եկղ Փառաւորեալն խօսեցաւ վասն քո,
ահաւադիկ քաղաքդ աստուծոյ։

եկղ Տէր ոմն կացցէ ի խորանի քում.
կամ ոմն բնակեսցէ ի լեառն սբ քո։
Որ գնայ ամբիծ գործէ զարդարու-
խօսի զճշմարտուն ի սրտի իւրում։

խոչ Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց
քոց. և ետուր ուրախութիւն սրբո-
տից մերոց։

Աչերնիդ Ճաշու վերափոխման Աստուածածնին ինն աւուրն։

կիր Այսօր ծնաւ որ ի հօրէ յառաջ
քան զյաւիտեանս ոսկին. որ է օծ
եալ տէր ի քաղաքի դաւթի։ Ի վա
յելուչի սբց քոց՝ յարգանդէ յա
ռաջ քան զարուսեակ ծնայ զքեզ։

քշ Ուրախ լեր բերկրեալդ տէր ընդ
քեզ. օրհնեալ ես դու ի կանայս,
և օրհնեալ է պտուղ որովայնի քո։

գշ Ընդ տէր ի հանգիստ քո. դու և
տապանակ կոտակի սրբութեան քո։

Աղերսիւ Հաշու Աստուածածնին։

Ողորմեա լեր քեզ կու գամ։ ղպե՛ս ի վերոյ։

Աղերսիւք Հաշու Յիսուսեան ըստ առաջոյ։

ճրգ Ոտքին սուրբ եկեսցէ ի քեզ. և զօրութիւն բարձրելոյն հովանասցէ քեզ։

ա Այսօր ծնաւ որ ի՛ւ ։ այլ ղպե՛ս ի վերոյ։

բ Ոգւով սրբով զօրացեալ սուրբ ստեփաննոս և բնարեալ յորոշ վայնէ. ճշմարիտ վկայ, սիրող և ա ռաքեալ առաքողին. ի քրիստոսէ ընկալար զղուարթնոցն զպսակ։

գ Կարապետն յովհաննէս զարհուրեալ՝ ի յորովայնէ յորովայն երկրէր պագեր. ապաստաւոր եղեւ բանին աստուծոյ. և լուեալ զահաւոր ձայնն՝ աղաղակեր ասելով, ահա գառն աստուծոյ որ բառնայ զմեղս աշխարհի։

դ Ողորմեա լեր քեզ կու գամ։ ղպե՛ս ի վերոյ։

ե Դու մանուկ՝ մարգարէ բարձրելոյն կոչեցեալ. գնացես առաջի տեառն՝ պատրաստել ճանապարհս նորա։

զ Ելան վիս ի գերոյ աստուածանաց,

'ի կաւոյ և 'ի տղմոյ։ Հաստատեաց 'ի վերայ վիմի զոտս իմ. և ուղղեաց զընացս իմ։

կամ Դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին մելքիսեդեկի. և տէր ընդ աջմէ քումմէ։

է Երդուաւ տէր դաւթի ճշմարտու-թեամբ՝ և ոչ ստեաց նմա, 'ի պտղոյ որովայնի նորա նստուցանել յաթոռ նորա։

ը Ուրախ լեր բերկ։ Ո այլ ոգեւ 'ի վերոյ։

Աղելսիա ձաշու քառասնօրեայ Գալստեանն Քրիստոսի 'ի տաճարն։

Տէր 'ի տաճար սուրբ իւրում. տէր յերկինս յաթոռ իւրում։

Սկզբ ողոգոմեան ձաշուն։

Տէր ամ մեր երեւեցաւ մեզ. ապրեցք ծնունդ ուրախութեան կանխաւ, վինչեւ յանկիւնս աեղանոյ։

Աղելսիա ձաշու Հրեշտակապետաց։

Աղօթմունքեամբ տեառն լի եղեւ երկիր, և բանիւ տեառն երկինք հաստատեցան. և հոգւով բերանոյ նոյ նորա ամենայն զօրութիւնք նց։

Յովհաննու կարապետին։

Դու մանուկ մարգարէ։ որպէս ի վերոյ։

Յովհաննու գլխատման։

Կարապետն յովհաննէս։ որպէս ի վերոյ։

Հայմբէն Մարգարէից։

Եկեղեցիս օրհնեցէք զաստուած, և զտէր յաղբերացն իսրայէլի։

Ամենայն Առաքելոց։

Կացուսցես զնոսա իշխանս ընդ ամենայն երկիր. և յիշեսցի անուն քո ընդ ամ ազգս ազգաց։
Ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա, և մինչեւ ի ծագս աշխարհի են խօսք նոցա։

Դաւթի և Յակոբայ։

Յիշեա տէր զդաւիթ, և զամենայն հեզութիւն նորա։

Նախահարցն։

Պատմէ զբան իւր յակոբայ, զարդարութիւն և զկրաւունս իսրայէլի։

Գրիգորի Լուսաւորչին։

Ժամբերելով համբերի տեառն, և նայեցաւ առ իս. և լուաւ աղաղակիս իմոյ։

Հայրապետաց և վարդապետաց։

Քահանայք քո զգեցցին զարդա-
րութիւն. և սուրբք քո ցնծալով
ցնծասցեն։

Ճգնաւորաց։

Երանելի են որք բնակեալ են ի
տան տեառն. յաւիտեանս յաւի-
տենից օրհնեսցեն զքեզ։

Կուսանաց։

Կացցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ
ի հանդերձս ոսկեհուռս զարդա-
րեալ և պաճուճեալ։
Տարցին Թագաւորի կուսանք զհետ
նր. և զընկերս նր տարցին նմա։

Թագաւորաց։

Տէր ի զօրութեան քում ուրախ
եղիցի Թագաւորն. ի փրկութեան
քում ցնծասցէ յոյժ։

Քառասնից, և Երկուց Ռիբուցն.

Ընդաք մեք ընդ հուր և ընդ ջուր,
և հաներ զմեզ ի հանգիստ։

Սրեծի հինգշաբաթի։

Պատրաստ արարեր առաջի իմ ըզ
սեղան՝ ակն յանդիմանն ներչաց իմոց։

Ա. յգաց։

Ընդ երեկոյս հանգիցեն լալիք. ա
ռաւօտոս եղիցի ուրախութիւն։

Աէլուխա Ճաշու Պարաիրոսաց։

Տէր սիրէ զիրաւունս. և ոչ ընդ- ած
վայր հարկանէ զաւուրբս իւր. այլ
յաւիտեան պահէ զնոսա։
փրկութիւն արդարոց ՚ի տեառնէ կամ
է. վերակացու է նոցա ՚ի ժամանակս
նեղութեան։
պարծեսցին սբքն փառօք՝ և ցընծասցեն ՚ի հանգիստ իւրեանց. և բարձր արասցեն զաստուած բերանօք իւրեանց։ կամ
Լոյս ծագեաց արդարոց. ուղղոց սրտից եղեւ ուրախութիւն։
պարծեսցին սբքն փառօք։ որպես՝ ՚ի վերոյ։ բձ
կարդացին արդարքն առ տէր, և տէր լուաւ նոցա. յամենայն նեղութենէ նոցա փրկեաց զնոսա։ բկ
վասն քո մեռանիմք զօրհանապազ. համարեցաք որպէս զոչխար ՚ի վերնումն։ գձ
Ուրախ լեցին ամենեքեան՝ որք յոյ- գկ

ասցեալ են ի քեզ. յաւիտեան ցընծասցեն, և բնակեսցիս դու ի նմա:

դձ Երդարբն որպէս զարմաւենիս ծաղկեսցին. որպէս զմայրան լիբանանու բազումք եղիցին:

դկ Բազում նեղութիւնք են արդարոց. յամենայնէ փրկէ զնոսա տէր. և պահէ զամենայն ոսկերս նոցա. և մի ի նոցանէ ոչ կոտրիցէ:

Սա ընթեռնուլի առաւօտուան ըսի պատշաճի. և յերգ ասի Հանգիստին Ղեւիական:

Աւետարան ըստ Մատթէոսի: (ե. 1:)

Եւ տեսեալ զժողովուրդն՝ ել ի լեառն. և իբրեւ նստաւ անդ՝ մատեան առ նա աշակերտք նորա. և բացեալ զբերան իւր ուսուցանէր զնոսա, և ասէր: Երանի աղքատացդ հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից: Երանի սգաւորացդ, զի նոքա մխիթարեսցին: Երանի հեզոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր: Երանի որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա

յապեացին: Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն: Երա- նի այնոցիկ՝ որք սուրբ են սրտիւք, զի նոքա զաստուած տեսցեն: Երա- նի խաղաղարարաց, զի նոքա որդիք աստուծոյ կոչեսցին: Երանի որ հա- լածեալ լինեն վասն արդարութե՛ն, զի նոցա է արքայութիւն երկնից: Երանի է ձեզ՝ յորժամ նախատիցեն զձեզ և հալածեսցեն, և ասիցեն զամենայն բան չար զձե՛նջ սուտ վասն իմ: Ցնծացէք և ուրախ լե- րուք, զի վարձք ձեր բազում են յերկինս. զի այսպէս հալածեցին զմարգարէսն որ յառաջ քան զձեզ եղեն:

Աւետարան ըստ Մարկոսի: (գ. 15)

Գնան՝ ի լեառն՝ և կոչէ առ ինքն զորս ինքն կամեցաւ, և չորան առ նա: Եւ արար երկոտասանս՝ զի լի- ցեն զնովաւ, և զի առաքեսցէ զնոսա քարոզել. և ունել իշխանու- թիւն բժշկել զդեւս՝ և հանել զդե՛ւս: Եւ եդ անուն սիմոնի՝ պետ-

բոս . և յակովբոս զեբեդեայ՝ և յովհաննու եղբօրն յակովբայ, եղ նոցա անուանս բանեբեգէս, որ է՝ որդիք որոտման . և զանդրէաս, և զփիլիպպոս, և զբարթուղիմէոս, և զմատթէոս զմաքսաւորն, և զթովմաս, և զյակովբոս ալփեայ, և զթադէոս, և զսիմոնէն կանանացի . և զյուդա իսկարիովտացի, որ և մատնեացն զնա :

Աւետարան ըստ Ղուկասու : (ԺԶ . 12)

Ասէ և ցկոչնատէրն . յորժամ առնիցես ճաշ կամ ընթրիս, մի կոչեր զբարեկամս քո, և մի զեղբարս քո, և մի զազգականս քո, և մի զդրացիս քո, և մի զմեծամեծս . զի մի և նոքա փոխարէն կոչեսցեն զքեզ, և լինիցի քեզ հատուցումն : Այլ յորժամ առնիցես ընդունելութիւն, կոչեա զաղքատս և զխեղս և զկաղս և զկոյրս : Եւ երանելի լինիցիս . զի ոչ ունին փոխարէն հատուցանելոյ քեզ . և հատուսցի քեզ փոխարէն ի յարու-

Թեան սպասից։ Իբրեւ լուաւ զայս ոմն ՚ի բազմականացն՝ ասէ ցնա. Երանի՛ որ կերիցէ հաց յարքայու-
Թեանն աստուծոյ։

Ընտրան ըստ Յովհաննու։ (ժ. 11)

Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն իւր դնէ ՚ի վերայ ոչխարաց։ Իսկ վարձկանն՝ որ ոչ է հովիւ, ոչ ոչ իւր են ոչխարքն, իբրեւ տեսանէ զգայլն գալ՝ թողու զոչխարան և փախչի. և գայլն յափշտակէ զնոսա և ցրուէ. քանզի վարձկան է, և չէ փոյթ նմա վասն ոչխարացն։ Ես եմ հովիւն քաջ, և ճանաչեմ զիմն՝ և ճանաչիմ յիմոցն։ Որպէս գիտէ զիս Հայրն, գիւ տեմ և ես զՀայրն. և զանձն իմ դնեմ ՚ի վերայ ոչխարաց։ Նաև՝ այլ ևս ոչխարք են իմ, որք ոչ են յայսմ գաւթէ. և զայն ևս պարտ է ինձ ածել այսր. և ձայնի իմում լսիցեն, և եղիցին մի հօտ՝ և մի հովիւ։

Փառք քեզ տէր աստուած մեր։

Հաւատամք ՚ի մի աստուած ՚ի հայրն ամենակալ՝ յարարիչն երկնի և երկրի, երեւելեաց և աներեւութից ։ Եւ ՚ի մի տէր յիսուս քրիստոս որդին աստուծոյ՝ ծնեալն յայ հօրէ՝ միածին, այսինքն յէութենէ հօր ։ Աստուած յաստուծոյ, լոյս ՚ի լուսոյ, աստուած ճշմարիտ, յաստուծոյ ճշմարտէ՝ ծնուեալ և ոչ արարած ։ Նոյն ինքն ՚ի բնութենէ հօր, որով ամենայն ինչ եղեւ յերկինս և ՚ի վերայ երկրի, երեւելիք և աներեւոյթք ։ Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ ՚ի յերկինից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարեալ ՚ի մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն սրբով ։ Որով էառ զմարմին զհոգի և զմիտ, և զամենայն որ ինչ է ՚ի մարդ, ճշմարտապէս և ոչ կարծեօք ։ Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ ՚ի յերկինս նովին մարմնով

նատաւ ընդ աջմէ հօր ։ Գալոց է նովին մարմնովն և փառօք հօր ՚ի դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ դոյ վախճան ։ Հաւատամք և ՚ի սուրբ հոգին՝ յանեղն և ՚ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և ՚ի մարգարէս և յաւետարանս ։ Որ էջն ՚ի յորդանան, քարոզեաց զառաքեալն, և բնակեցաւ ՚ի սուրբսն ։ Հաւատամք և ՚ի մի միայն ընդհանրական և յառաքելական եկեղեցի, ՚ի մի մկրտութիւն, յապաշխարու-թի, ՚ի քաւութիւն և ՚ի թողութիւն մեղաց ։ Ի յարութիւնն մեռելոց, ՚ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց, յարքայութիւն երկնից և ՚ի կեանսն յաւիտենականս ։

Ա՛ինչ- ցոյս են հաւատոյ բանք ։

Իսկ ոմք ասեն՝ էր երբեմն, յորժամ ոչ էր որդի. կամ էր երբեմն, յորժամ ոչ էր սուրբ հոգի. կամ թէ՝ յոչէից եղեն, կամ յայլմէ

էութենէ ասեն լինիլ զորին այ և կամ զսուրբ Հոգին. և թէ՝ փոփոխելիք են կամ այլայլելիք, զայն պիտիան նզովէ կաթուղիկէ և առաքելական եկեղեցի։

Ի սրբոյ Աստուածային մերմէ ասացեալ։

Խոկ մեք փառաւորեցուք որ յառաջ քան զյաւիտեանս, երկիրպագանելով սրբոյ երրորդութեանն և միոյ աճուրդեանն Հօր և որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և։

քրշ Ընդ այս խաղաղութիւն զտեր աղա։ Ընդ եւս հաւատով աղաչեցուք և խնդրեցուք ի տեառնէ աստուծոյ և ի փրկչէն մերմէ յիսուսէ քրիստոսէ ի ժամուս պաշտաման և աղօթից, զի արժանի ընդունելութեան արասցէ. լուիցէ տեր ձայնի աղաչանաց մերոց, ընկալցի զխնդրուածս սրտից մերոց, թողցէ զյանցանս մեր, ողորմեսցի ի վերայ մեր։ Զօրք մեր և խնդրուածք յաւէնայն ժամ մտցեն առաջի մեծի տէրութեան նորա, և

նա տացէ մեզ միաբան միով հա-
ւատով և սրտաբուխ վաստակիլ
ի գործս բարեաց, զի զողորմու-
թեան գինորհն իւր՝ արասցէ ի
վերայ մեր տէրն ամենակալ, կե-
ցուսցէ և ողորմեսցի։ Ո՛ժամս և։
Ո՛հրեշ։ Ո՛.քաւութի։ Ո՛ՐԲ խա։
Եւ և։ Ո՛անձինս։ Աղօրմեաց։

Աղօթք։

Տէր մեր և փրկիչ Յիսուս Քրիս-
տոս, որ մեծդ ես ողորմութեամբ
և առատ պարգեւօք բարերարու-
թեան քո։ Որ դու քոյին կամաւդ
ի ժամուս յայսմիկ համբերեցեր
չարչարանաց խաչի և մահու՝ յա-
ղագս մեղաց մերոց։ Եւ պարգևե-
ցեր առատապէս զպարգեւս հոգ-
ւոյդ սրբոյ երանելի առաքելոցն։
Հաղորդս արա և զմեզ տէր աղա-
չեմք զքեզ՝ աստուածային պարգե-
ւացդ, թողութեան մեղաց և ըն-
դունելութեան հոգւոյդ սրբոյ։
Որպէս զի՝ արժանաւորք եղիցուք
պահպանեալ զքեզ

ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյդ ։
այժմ և միշտ և ։

Խաղաղութիւն ամենեցուն ։

Խաղաղութիւք քոյ քրիստոս փրկիչ մեր ։ որ ՚ի վեր ե քան զամենայն միտս և զբանս ։ ամրացո զմեզ և աներկիւղ պահեա յամէն չարէ ։ Հաւատարեա զմեզ ընդ ճշմարիտ երկրպագուս քո ։ որք հոգւով և ճշմարտութեամբ քեզ երկիրպագանեն ։ Վասն դի ամենասուրբ երրորդութեդ վայելեն փառք իշխանութիւն և պատիւ ։ այժմ և ։

Օրհնեալ տէր մեր յս քս ։ Տէր ողորմեացի զամենեսեան ։ ամէն ։

Հայր մեր որ յերկինս ես ։

դպ Միայն սուրբ ։ միայն տէր ։ յս քս ՚ի փառս աստուծոյ հօր ։ ամէն ։

քհ Օրհնեալ Հայր որ՝ ընդ ճշմարիտ ։
դպ ամէն ։

քհ Օրհնեալ Որդի որ՝ ընդ ճշմարիտ ։
դպ ամէն ։

քհ Օրհնեալ Հոգի որ՝ ընդ ճշմարիտ ։
դպ ամէն ։

Օրհնութիւն և փառք հօր և ՔՀ
Հայր սբ: Որդիդ սբ: Հոգիդ սբ: ԴՊ
Օրհնութի՛ հօր և որդւոյ և սրբ- ՔՀ
բոյ հոգւոյն, այժմ և միշտ և: ___
Եղիցի անուն նո՛ն օրհնեալ՝ յայսմհե- ԴՊ
տէ մինչեւ յաւիտեան: Ամէն: ___
Կատարումն օրինաց և մարգարէից ՔՀ
դու ես քրիստոս աստուած փրկիչ մեր. որ լցեր զամենայն հայրաւական տնօրէնութիւնս քո. լից և զմեզ հոգւովդ քով սրբով:
Օրհնեցից զտէր յամենայն ժամ. ՍՐԿ
յամենայն ժամ օրհնութիւն նորա
՚ի բերան իմ:
Օրհնեալք եղերուք ՚ի հնորհաց ՔՀ
սրբոյ հոգւոյն. երիցս քառաղղութեամբ. և տէր եղիցի ընդ ձեզ և ընդ ամենեսեանդ. ամէն:

Օրհնութիւն սեղանոյ, վասն մարմնաւոր կերակրոյ և ըմպելեաց։

Պարտական ընդ ընդանի հայր, և զարդարեն ի կերակրուն, և կանգնին իրարանցի որ ի սեղանի ։ Ոչ գոյ իշխանաւորն, կամ չհանայն, և ասէ, աղմոս հոգոյ ։

Աչք ամենեցուն ի քեզ յուսան, և դու տաս կերակուր նոցա ի ժամու ։

դպ Բարձր առնեմ զքեզ աստուած իմ, և թագաւոր իմ, և օրհնեմ զանուն քո յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից ։

Ամեն օրհնասպաս օրհնեցից զքեզ, և գովեցից զանուն քո յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից ։

Մեծ է տէր և օրհնեալ է յոյժ, և մեծութեան նորա ոչ գոյ չափ ։

Ազգ և ազգ գովեսցեն զգործս քո, և զզօրութիւնս քո պատմեսցեն ։

Զվեծվայելչութիւն փառաց սրբութեան քո խօսեսցին, և զքանչելիս քո պատմեսցեն ։

Զզօրութիւն ահի քո ասասցեն,

և զմեծութիւնս քո պատմեսցեն։
Ողորմութիւն քո բղխեսցեն, և արդարութեամբ
քո ցնծասցեն։
Վիրաւորողորմած է տէր, երկայնա-
միտ և բազումողորմ։
Քաղցր է տէր առ ամենեսեան, և
գթութիւն նորա ի վերայ ամենայն
արարածոց իւրոց։
Խոստովան եղիցին առ քեզ տէր
ամենայն գործք քո. և սուրբք քո
օրհնեսցեն զքեզ։
Զփառս արքայութեան քո ասասցեն, և զզօրութիւս քո պատմեսցեն։
Ծանաչել որդւոց մարդկան զզօրութիւնս քո, և զփառս մեծվայելչ
չութեան արքայութեան քո։
Արքայութիւն քո արքայութիւն
ամենայն յաւիտենից. և տէրութիւն
քո ազգէ ազգ։
Հաւատարիմ է տէր յամենայն բանս իւր,
և արդար է յամենայն գործս իւր։
Հաստատէ տէր զամենայն գայթագղեալս, և կանգնէ զամենայն գլորեալս։

Ընդ ամենեցուն ՚ի քեզ յուսան,
և դու տաս կերակուր նոցա ՚ի ժամու։
Տաս դու նոցա և կերակրին. քա-
նաս զձեռն քո, և լցուցանես զա-
մենեսեան քաղցրութիւք կամօք քովք։
Արդար է տէր յամենայն ճանապարհս
իւր, և սուրբ է յամենայն գործս իւր։
Մերձ է տէր առ ամենեսեան՝ որք
կարդան առ նա, առ ամենեսեան՝
որք կարդան առ նա ճշմարտութիւն։
Զկամս երկիւղածաց իւրոց առնէ
տէր, աղօթից նոցա լսէ և կեցու-
ցանէ զնոսա։
Պահէ տէր զամենեսեան որք սիրեն
զնա, և զամ մեղաւորս սատակէ տէր։
Զօրհնութիւնս տեառն խօսեսցի
բերան իմ. օրհնեսցէ ամենայն կեն-
դանի զանուն սուրբ նորա յաւի-
տեան, և յաւիտեանս յաւիտենից։

փառք հօր և որդւոյ և։

քհ Աղօթման գիշած է տէր. կերակուր
տայ երկիւղածաց իւրոց։

սրկ Եւ ևս խաղաղութեան զաէր ա։
Աղաչեսցուք զաւետարանն՝ զի

պարգեւեսցէ մեզ կերակուր ու-
րախութեան, և լցուսցէ զսիր-
տս մեր ի լիութենէ արարածոց
իւրոց։ Ընդունակալ տէր ամ մեր կե։
Օրհնեա քո ամ մեր հոգեւոր օրհ- քհ
նութեամբ զկերակուրս և զըմպե-
լիս ծառայից քոց. և չնորհեա ա-
ռողջութիւն հոգւոյ և մարմնոյ։
Արժէս զի կրօնաւորական պարկե-
շտութիւք վայելելով ի մարմնաւոր
պիտոյից՝ անանց բարեացդ և երկ-
նից ալքայութեդ հաղորդս լինցուք
ընդ ամ սուրբս քո։ Ու գոհութիւք
փառաւորեսցուք զքեզ ընդ հօր և
ամենասուրբ հոգւոյդ. այժմ և։

Հայր մեր որ յերկինս ես։

Ու օրհնող սեղանոյն կալով կանգուն՝ և առեալ վճայն
բեմանէ ընդ պատառաւորացն, որ առընկեր կան.
նմա վճիռ տայորիկ, որ պատրաստողն է ճաշոյն, և նոյա
առ ամենեսեան. և ասէ, ճաշակեցէք խաղաղու-
թեամբ. և նոքին ի ճաշն։ Իսկ երբ վանական իջեն,
նմա անապատաւորք, նստոյ մինն յերէսաց ի բարձրագոյն
պեղոջ, և առեալ ընթերցուած՝ վճիռ ասպատածայնի.
և ամենեքեան ոանկն ջրեցեն ընթերցմանն անմոռանալ ճա-
շակմամբ։ Ու երբ ոչ ինդրեսցէ վըճռաւճն ինչ պա-

բախտանաց, եւ ծնեալ որ կարողքն էին. եւ տայիցէ
ճաշակեցին լեռնէսցն, եւ ոչ աղաղակաւ: Ո՛չ յեր յա-
նելոյ ի պեղանոյն, տայիցէ կացցեն ի պեղս իւրեանց:
Ո՛չ ասացէք չահանայն:

Տէր յի՝ լցաք ի քարուքթենց քոց:
դպ Տացուք գոհութի ամն այ մերոյ:
Ընդ տեառն ի վերայ երկիւղածաց
իւրոց, և ոյք յուսան յողորմու-
թիւն նորա:
Փրկել ի մահուանէ զանձինս նոցա,
և կեցուցանել զնոսա ի սովու:
Անձինք մեր համբերեցան տեառն,
զի օգնական և պաշտպան մեր է:
Ի նա ուրախ եղիցին սիրտք մեր,
և յանուն սբ նորա յուսացաք:
Եղիցի ողորմութի քո տէր ի վերայ
մեր, որպէս յուսացաք ի քեզ:
փառք հօր և որդւոյ և:
քհ Կերակրիչ և ուրախարար տէր,
փառք քեզ. լցուցանող քրիստոս
գոհանամք զքէն:
սրկ Ո՛չ ևս խաղաղութեան զտէր ա:
Գոհացարուք ի վերայ լինութեանց
պարգեւաց տեառն այ մերոյ: Որ

կերակրել զմեզ օր ըստ օրէ առա-
տապէս քաղցրութիւք կամաք իւ-
րովք : Ոչ ի հոգևոր բարութեանն
և երկնից ալքայութենն հաղորդս
արասցէ զծառայս իւր ըստ ակնկա-
լութե յուսոյն մերոյ : Ընդ նմա :

Աղօթք .

Որ հնեալ ես տէր ամ մեր՝ որ կե-
րակրես զմեզ ի մանկութենէ, և
տաս կերակուր ամ մսեղեաց. լցո
ուրախութիք և բերկրութեամբ զղ
սիրտս մեր : Որպէս զի զամ բաւա-
կանութիւն ունկցիմք առաւելեալք
ի գործս բարութեան ի քո յն ի
տէր մեր : Որում վայելէ փառք
իշխանութիւն և պատիւ . այժմ և :

Խաղաղութիւն ամենեցուն :

Փառք քեզ տէր՝ փառք քեզ Հա-
գաւոր փառաց . որ ետուր մեզ
կերակուր ուրախութեան . և լցուս
ցեր զսիրտս մեր ի լիութիւն ամե-
նաբաւականն ողորմութեան քոյ .
լցո և այժմ զմեզ հոգևովք քով
սրբով . որպէս զի գոյցուք առաջի

քոյ հաճոյք, և մի՛ ամաչեցեալք, զի դու գաս և հատուցանես իւրաքանչիւր ըստ գործս իւր, և քեզ վայել փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և:

Օրհնեալ տէր մեր յի՛ քո՛. ամէն:

Հայր մեր որ յերկինս ես:

Օ՛ կերսղէս աստուած օրհնեսցէ. սպասաւորացն և երախտաւորացն վարձս բարեաց պարգեւեսցէ. և օրհնեսցէ զամենեսեան: Քրիստոս աստուած որ զմեզ կերակրեաց և լիացոյց, նմա փառք յաւիտեանս ամէն:





Կարդաւորութիւն հասարակաց աղօթից երեկոյի ժամուն : Որ կատարի ի դէմ Որդւոյն Աստուծոյ , որ եկ ի խաչէն և պատեալ պատառատիալաւ՝ եդաւ ի դերեզմանի :

Ես առ աստուած կարդացի , և նա լուաւ ինձ յերեկոյ՝ ի վաղորդայն՝ և ի հասարակ աւուր : Սպասէի աստուծոյ իմոյ , և ականջ նէի կենարարին . որ վրկէ զծառայս իւր և կեցուցանէ :

Փառք Հօր և որդւոյ և :

Ես ևս խաղաղութեան զտեր ա : Օրհնութիւն և փառք Հօր և :

Խաղաղութիւն ամենեցուն :

Սաղմոս . ճե :

Խոնարհեցո տէր զունկն քո և լուր ինձ . զի աղքատ և տնանկ եմ ես :

Պահեա զանձն իմ սուրբ տէր . և

փրկեա զծառայս քո աստուած իմ
որ ի քեզ յուսացեալ։
Ողորմեա ինձ տէր զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ, ուրախ արա զանձն ծառայի քո, զի առ քեզ տէր համբարձի զանձն իմ։
Օ՛ի դու տէր քաղցր և ուղիղ ես, բազումողորմ առ ամենեսեան որք կարդան առ քեզ։
Ունկնդիր տէր աղօթից իմոց, և նայեա ի ձայն խնդրուածոց իմոց։
Յաւուր նեղութեան իմոյ կարդացի առ քեզ, և լուար ինձ։
Ոչ ոք է նման քեզ յաստծս տէր, և ոչ ոք է որպէս զգործս քո։
Ամենայն ազգս զոր արարեր՝ եկեսցեն և երկրպագեցեն առաջի քո, և փառաւորեսցեն զանուն քո յաւիտեան։
Մեծ ես դու տէր և առնես սքանչելիս, և դու միայն ես աստուած։
Ուսուցանեա ինձ ի ճանապարհի քում, և գնացից ի ճշմարտութեան քում, և ուրախ եղիցի սիրտ իմ՝

երկնչիլ յանուանէ քումմէ։
Խոստովան եղէց առ քեզ տէր
աստուած իմ բոլորով սրտիւ ի-
մով. փառաւորէ զանուն քո
յաւիտեան։
Մեծ եղեւ ՚ի վերայ իմ ողորմու-
թիւն քո տէր, և փրկեցեր զանձն
իմ ՚ի դժոխոց ներքինոց։
Աստուած՝ անօրէնք յարեան ՚ի վե-
րայ իմ, և ժողովք հզօրաց խնդ-
րեցին զանձն իմ, և ոչ համարե-
ցան զքեզ առաջի իւրեանց։
Այլ դու տէր աստուած իմ՝ դո-
թած ես և ողորմած, երկայնամիտ
բազումողորմ և ճշմարիտ, նայեա
առ իս և ողորմեա ինձ։
Տուր զօրութիւն ծառայի քո, կեցո
զորդի աղախնոյ քո. և արա առիս
նշան բարութեան։
Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն,
զի դու տէր օգնեցեր ինձ և մխի-
թարեցեր զիս։
փառք հօր և որդւոյ և։
փառք քեզ աստուած՝ փառք քեզ. մաղ

Յաղագս ամի տէր փառք քեզ։
Եւ ևս խաղաղութեան զտէր ա։
Օրհնութիւն և փառք հօր և։

Խաղաղութիւն Ամենեցուն։

Սաղմոս. ՃԼԹ։

Ակրեցո զիս տէր ի մարդոյ չարէ,
յառնէ անիրաւէ փրկեա զիս։
Խորհեցան զանօրէնութիւն ի սիրտ
տան իւրեանց. զօր ամենայն պատ-
րաստեցան ի պատերազմ։
Սրեցին զլեզուս իւրեանց որպէս
զօձի, և թոյնք իժիւ ի նեղքոյ շրթ-
թանց նոցա։
Պահեա զիս տէր ի ձեռաց մեղաւո-
րի, և ի մարդոյ չարէ փրկեա զիս։
Խորհեցան խափանել զգնացս իմ.
թագուցին ամբարտաւանք որոգ-
այթ ինձ։
Լարս ձգեցին որոգայթ ոտից իմոց,
շուրջ զշաւղօք իմովք եդին ինձ
զդայթակղութիւն։
Ասացի՝ տէր աստ իմ ես դու, ունկն
դիր տէր ձայնի աղօթից իմոց։
Տէր տէր զօրութիւն փրկութեան

իմոյ, Հովանի գլխոյ իմոյ յաւուր
պատերազմի։
Մի մատներ զիս տէր ի ցանկութիւն
մեզաւորաց, որ խորհեցան վասն
իմ, մի ընդ վայր հարկաներ զիս։
Օ՛ի մի երբէք բարձրասցին, և խոր-
հուրդք նոցա մի կատարեսցին. վախ-
ճան կատարածի նոցա վաստակ չըր-
թանց իւրեանց ծածկեսցէ զնոսա։
Ընկցես ի վերայ նոցա զկայծակունս
հրոյ, և կործանեսցես զնոսա. ի տա-
ռապանաց մի կարասցեն կեալ։
Մարդոյ լեզուանոյ մի յաջողեսցի
ի վերայ երկրի. զայր մեղաւոր չա-
րիք իւր որսասցեն ի կորուստ։
Ծանեայ զի առնես տէր դատաստան
աղքատի, և իրաւունս տնանկի։
Ընդարձք գոհասցին զանուանէ քումմէ,
և բնակեսցին ուղիղք առաջի
երեսաց քոց։
Տէր կարդացի առ քեզ՝ և լուր ինձ,
նայեա ի ձայն աղօթից իմոց ի
կարդալ իմում առ քեզ։
Ուղիղ եղիցին աղօթք իմ ոսպ խունկ

առաջի քո տէր. համբարձումն ձե-
ռաց իմոց պատարագ երեկոյի։
Վիր տէր պահապան բերանոյ իմոյ.
և դուռն ամուր շրթանց իմոց, զի մի՛
խոտորեսցի սիրտ իմ բանիւ չարուե։
Ի պատճառել զպատճառս մեղաց
ընդ մարդս՝ որք գործեն զանօրէ-
նութիւն. և ոչ եղէց կցորդ ընտ-
րելոց նոցա։
Խրատեսցէ զիս արդարն ողորմութի՛
և յանդիման արասցէ. իւղ մեղա-
ւորի մի՛ օծցէ զգլուխ իմ, այլ ա-
ղօթք իմ՛ի կամս նորա։
Ընդեղան մերձ առ վիմին դատա-
ւորք նոցա. լուիցեն բանից իմոց
և քաղցրասցին։
Ոպ թանձրութի՛ հողոյ՝ զի ակռեալէ
՛ի վերայ երկրի, ցրուեսցին ոսկերք
նոցա մերձ՛ի դժոխս։
Ըա՛ քեզ աչք իմ, տէր, ՛ի քեզ
յուսացայ՝ մի՛ հաներ զհոգի իմ։
Պահեա զիս յորոգայթէ որ թա-
գուցաւ ինձ, ՛ի գայթակղութենէ
գործողին զանօրէնութիւն։

Ընկերին 'ի ցանց նորա մեղաւորք,
միայն եմ ես մինչեւ անցից։
Զայնիւ իմով ես առ տէր կարդա-
ցի, ձայնիւ իմով զտէր աղաչեցի։
Սիոնեցից առաջի տեառն զաղօթս
իմ, և զնեղութիւնս իմ առաջի նո-
ցա պատմեցից։
Ի նուաղիլ հնձէն հոգւոյ իմոյ,
դու տէր ծանեար զշաւիղս իմ. 'ի
ճանապարհ յոր և գնայի, թաղու-
ցաւ ինձ որոգայթ։
Հայեի յաջմէ և տեսանէի, և ոչ
ոք ճանաչէր զիս. կորեաւ հինէն
փախուստ իմ, և ոչ գտաւ խնդ-
րող անձին իմոյ։
Ղաղաղեցի առ քեզ տէր և ասա-
ցի, դու ես յոյս և բաժին իմ յերկ-
րին կենդանեաց։
Նայեա տէր յաղօթս իմ, զի ես
խոնարհ եղէ յոյժ. ապրեցո զիս
'ի հալածչաց իմոց, զի հզօրք ե-
ղեն քան զիս։
Ցէր հան 'ի բանտէ զանձն իմ, դո-
հանամ զանուանէ քումմէ։

Եւ քեզ սպասեն արդարք՝ մինչեւ
հատուսցես ։
փառք հօր և որդւոյ և ։

Երգ Կիրակամուտ ։

Ընկալցեմք. ընկալցուք ։

Այս զընտրեալ տնէրըդ փառաւորեաց
ահեղական, հօր եւ երկնաւոր սիրը
քոյ կենարարիւ յիսուս քրիստոս ։
Նկեաւ ի մէտանել արեգականն,
սեսայք ըզլոյս երեկոյին ։ Օրհնեմք
ըզհայր և զորդի և զսուրբ հոգին
աստուածոյ ։ Եւ ամենեքեան ասեմք
ամէն ։ Ընժանաւորեա ըզմեզ յամ
ժամ, օրհնել ձայնիւ երգով զա-
նուն փառաց սմենասուրբ երրոր-
դութեանդ ։ Որ տայ զկենդա-
նութիւն վասն որոյ և աշխարհս
ընդքեզ փառաւորէ ։

Մաղթանք ։

Օրհնեալ տէր՝ որ բնակեալդ ես
ի բարձունս, և օրհնեալ են փառք

մեծութեան քոյ. որ հաստատեցեր զլուսաւորս ի բարձունս. ի յերկնից լոյս ծագեցեր ընդ ամենայն տիեզերս: Ընտրեր զարեգակն լուսատու տունջեան, զլուսինն և զաստեղս՝ լուսատու գիշերոյ, և զլոյս ճրագի. գու ես լոյս գովելի. սուրբ և առաջին լոյսն. ի քէն փախնու խաւարն. և զլոյս քո կենդանի՝ տէր ծագեա ի սիրտս մեր: Եւ մեք միաբան ասասցուք, օրհնեալ է անուն սուրբ փառաց քոյ. և քեզ երգեմք զօրհնութիւն և զփառս հօր և որդւոյ և հոգւոյդ սրբոյ, այժմ և:

Կարող:

Ասեալքս ի ժամ երեկոյիս ամենեքեան համբառնալով զձեռս մեր փառաւորեմք զքեզ տէր ամ մեր. որ չնորհեցեր մեզ զտիւս խաղաղութիւն անցուցանել, և հասանիլ ի ժամ երեկոյիս: Ըրժանաւորեա զմեզ տէր՝ սուրբ սրտիւ, հրեշտակային երգով՝ գոհաբանութի

մատուցանել տեառն ՚ի ամենա-
կալից . կեցո և ողորմեա : Ողոր-
մեաց մեզ տէր ՚ած մեր ըստ մեծի
ողորմութեան քոմ . ասասցուք
ամենեքեան միաբանութեամբ :
Տէր ողորմեա . տէր ողոր . տէր ո :

Մաղթանք :

Հասեալքս ՚ի ժամ երեկոյիս ամե-
նեքեան՝ անդադար փառաւորեմք
զհայր և զորդի և զսուրբ հոգիդ ,
այժմ և :

Ա՛նահիտք Ձննդեանն Քրիստոսի , և Աւետեաց , և Վերափո-
խման , և այլոց ծնիցի Աստուածածնին :

ա Տէր ասաց ցիս՝ որդի իմ ես դու ,
և ես այսօր ծնայ զքեզ :
Ընդէր խառնեցան հեթանոսք . և
ժողովուրդք խորհեցան ՚ի անօրէս :
բ Ա՛ծաղատացայ անձն իմ զտէր . և
ընծայեցի հոգի իմ աստուածոյ վըրկ-
չաւ իմոյ :
Օ՛ի հայեցաւ ՚ի խոնարհութիւն
աղախնոյ իւրոյ . ահա յայսմ հետէ
երանիցեն ինձ ամենայն ազգք :

Լցեալ որպէս զանձրեւ ՚ի վեր գեղման, զ
որպէս ցօղ զի ցօղէ յերկիր։
Ընտրեաց զներաւունս քո արքայն
աւուր, և զարդարութիւնս քո որդ-
ւոյ թագաւորի։
Մեսրոպ Ցարութեան։

Տէր կարող և հզօր. տէր կարող աձ
՚ի պատերազմի։
Տեառն է երկիր լրիւ իւրով. աշ-
խարհ՝ և ամենայն բնակիչք նորա։
Ելից քո աստուած յաւիտեանս ակ
յաւիտենից, գաւազան ուղղու՛
գաւազան արքայութեան քո։
Ընկեցաց սիրտ իմ զբան բարի. և
ասեմ զգործս իմ թագաւորի։
Տէր թագաւորեաց՝ ցնծասցէ եր- բձ
կիր. ուրախ եղիցին կղզիք բազումք։
Երեւեցան փայլատակունք նորա
սիեզերաց. եռեաց՝ և սասանեցաւ
երկիր։
Արդեօք տեառն երդ նոր ամե- բկ
նայն երկիր. ծառայեցէք տեառն
ուրախութեամբ։
Մտէք առաջի նորա ցնծութեամբ.

ծաներուք զի նա է տէր ձեր մեր։

գձ Լեայք և տեսէք զգործս աստու-
ծոյ, որ արար զնշանս և զարուես-
տըս ի վերայ երկրի։

Ըստուած մեր ապաւէն և զօրու-
թիւն, օգնական ի վերայ նեղու-
թեանց, որք գտին զմեզ յոյժ։

գկ Ըստուած մեր յերկինս և յերկրի,
զամ զոր ինչ կամեցաւ և արար։
Ցեսանեն իսրայէլի յեզիպտոսէ,
տանն յակոբայ ի ժողովրդենէ այ-
լազգեացդ։

գձ Նղիցի ձեռն քո ի վերայ առն, աջ
քո ի վերայ որդւոյ մարդոյ, զոր
զօրացուցեր զնա ի քեզ։

Որ հովուեսդ իբրև նայեաց, որ ա-
ռաջնորդես որպէս խաչին յովսեփու։

գկ Ըստուած աստուծոց տէր խօսե-
ցաւ, և կոչեաց զերկիր։
Ցելից արեգական մինչեւ ի մու-
տըս արեւուս։

Մխսդեք Գալստեան։

Օրհնեալ որ գաս յանուն տեառն,
օրհնեալ որ գալոց ես։

Տէր ամէն մեր երեւեցաւ մեզ. ա-
րարէք ուրախութեան կանխաւ, մինչեւ յանկիւնս սեղանոյ:

Եկեղեցւոյ:

Այսօր օրհնեցէք ամենայն ծառայք տեառն զտէր:
Ո՛ կայք ի տան տեն, և ի գաւիթս աստուծոյ մերոյ:

Կիւրակամուտ:

Սիրեցի՛ զի լուիցէ տէր զձայն աղաչից իմոց:
Օ՛ի խոնարհեցոյց զունկն իւր առ իս, և ես յաւուրս իմ կարդացի առ նա:

Մեսեդիք Մարտիրոսաց:

Ընկեցի ողորմութիւն քո տէր ի վերայ մեր. որպէս յուսացաք ի քեզ: ՃՆԾացէք արդարք ի տէր. ուղղոց վայելէ օրհնութիւն: ակ
Տէր սիրէ զիրաւունս և ոչ լքանէ զվայր հարիանէ զսուրբս իւր: Փրկութիւն արդարոց ի տեառնէ է. վերակացու է նոցա ի ժամանակս նեղութեան:

բձ Աքանչելի է ձեռ 'ի վերայ սրբոց հրեշտակաց, աստուած խորհելի։
Տէր աստուած օրհնեալ. օրհնեալ է տէր զօրհանապազ։

բկ Օգնութիւն ինձ 'ի տեառնէ եկեսցէ, որ արար զերկինս և զերկիր։
Չամբարձի զաչս իմ 'ի լերինս, ուստի եկեսցէ ինձ օգնութիւն։

գձ Աստուած վառաւորեալ է 'ի խորհուրդս սրբոց իւրոց, մեծ և սքանչելի 'ի վերայ այնոցիկ որ շուրջ են զնովաւ։
Խոստովան եղիցին երկինք սքանչելեացդ քոց տէր, և ճշմարտութիւն քո յեկեղեցիս սրբոց։

դկ Միրեցից զքեզ՝ տէր զօրութիւն իմ. տէր հաստատուիչ իմ, ապաւէն իմ և փրկիչ իմ։
Աստուած օգնական իմ, և ես յուսամ 'ի նա. ապաւէն իմ, եղջիւր փրկութեան իմոյ՝ ընդունելի իմ է։

դձ Ներգ է տէր առ ամենեսեան, որք կարդան առ նա. առ ամենեսեան՝ որք կարդան առ նա ճշմարտութեամբ։

Օ՛կամ երկիւղածաց իւրոց առնէ
տէր. ալօթից նոցա լսէ՝ և կեցու-
ցանէ զնոսա։

դկ Ընդարձակ որպէս զարմանենիս ծաղ-
կեսցին. որպէս զմայրան լիբանանու
բազումք եղիցին։
Տնկեալք եղիցին ՚ի տան տեառն,
և ՚ի գաւիթս աստուծոյ մերոյ ծաղ-
կեսցին։

Մեսրոբ Վարշապուհեան.

աձ Տէր լուիցէ ինձ ՚ի կարդալ իմում
առ նա։
Ի կարդալ իմում լուար ինձ աստ-
ուած ըստ արդարութեան իմոյ։

ակ Մի՛ ասասցէ Թշնամին իմ Թէ յաղ-
Թեցի նմա. կամ նեղիչք իմ ցընդ-
ծասցեն Թէ ես սասանեցայց։
Մինչև յե՞րբ դարձուցանես զերեսս
քո յինէն. մինչև յե՞րբ բարձրանայ
Թշնամին ՚ի վերայ իմ. նայեա և
լուր ինձ տէր աստուած իմ։

բձ Լերան արդարոյ պատմէ զիմաս-
տութիւն. և լեզու նորա խօսեսցի
զիրաւունս։

Մի՛ նախանձիր ընդ չարս. և մի՛ ընդ
այնոսիկ՝ որք գործեն զանօրէնութիւն։
ըկ Քաղցրութիւն ատարեր ընդ ծառայի
քումմ տէր, քան թանի քումմ։
Քաղցր ես դու տէր, և քաղցրու-
թեամբ քով խրատեա զիս։
գձ Նայեա և լուր ինձ տէր ամ իմ։
Մինչեւ յե՞րբ տէր՝ մոռանաս զիս
իսպառ. մինչեւ յե՞րբ դարձուցա-
նես զերեսս քո յինէն։
գկ Զմոռութիւնք քո բազում են տէր,
քան իրաւանց քոց կեցո զիս։
Տես զխոնարհութիւն իմ, և փրկեա
զիս. զի զօրէն քո ես ոչ մոռացայ։
դձ Ատուած յօգնել ինձ նայեաց. և
տէր յընկերել ինձ վուրթա։
Ամաչեսցեն և յամօթ լիցին, որք
խնդրեին զանձն իմ։
դկ Դարձ ամ աղօթից իմոց յաղաչել
ինձ առ քեզ. յերկիւղէ թշնամ-
ւոյն փրկեա զանձն իմ։
Ծածկեսցես զիս ի ժողովոց չարաց.
ի բազմութենէ՝ որք գործեն զանօ-
րէնութիւն։

Ի ՄԵԾԻ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ ։

Լուացից սրբուԹիՐ զձեռս իմ. և
շուրջ եղէց զսեղանով քո տէր ։
Տէր սիրեցի զվայելչուԹիՆ տան քո,
և զտեղի յարկի փառաց քոց ։

Ի ՄԵԾԻ ՈՒՐԲԱԹԱ ։

Ընտուն ’ի կերակուր ինձ լեզի. և
’ի ծարաւ իմ արբուցին ինձ քացախ ։
Եղիցին սեղանք նոցա առաջի նոցա
յորոգայԹ, ’ի հատուցումն և ’ի
գայԹակղուԹիւն ։

Ի ԾՕՂԻ ՍՐԲՈՅ ԽԱՉԻՆ ։

Ընտուր երկիւղածաց քոց նշան,
զի ապրեսցին յերեսաց աղեղան ։
Ողջակէս վրկեցան սիրելիք քո. կեցո
աջով քո և լուր մեզ ։

ԿԱՐԳ ՈՂՋՈՂՋԵԼոՅԹԱՑ ։

Ողջոյ եղիցին աղօԹիք իմ ։
Օրպէս խունկ առաջի քո տէր ։
Համբարձումն ձեռաց իմոց ։
Պատարագ երեկոյի ։

ՅԱՏՈՒԿ ԱՌԱՋԱԿՈՂՄԱՆՆ ։

Ողջոյ եղիցին աղօԹիք իմ որպէս

խոնհկ առաջի քո տէր. Համբարձումն ձեռաց իմոց՝ պատարագ եկեղեցի։

Ցէր աղաղակեցի առ քեզ և լուր ինձ։

Նայեաց՝ի ձայն խնդրուածոց իմոց, յաղաղակել իմում առ քեզ։

Ի միջի հինգշաբաթու.

Ողիղ եղիցին աղօթք իմ որպէս խոնհկ առաջի քո տէր։

Օրհնկոյ աղօթս մեր ընկալ տէր. և զտարածումն ձեռաց մերոց։

Ի միջի աւրբաթու։

Ողիղ եղիցին աղաչանք մեր ոմն խոնհկ առաջի քո տէր. Համբարձումն ձեռաց մերոց՝ պատարագ երեկոյի։

Քարոզ կիւրակամոյ, և ամենայն աւուրց տէրունեաց։

Ողջոյնդ ամենեքեան միաբանու թեամբ. տէր օրհնեա։

Զան խաղաղութեան ամ աշխարհի՝ և հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ. զտէր աղաչեսցուք։

վ֊ան ամենայն սուրբ և ուղղա֊
փառ եպիսկոպոսաց. զսէր աղա։
Վ֊ան հայրապետին մերոյ տեառն
(այս անուն) կենաց՝ և վիճակ֊
հոգւոյ նորին. զսէր աղա։
Վ֊ան վարդապետաց՝ քահանայից՝
սարկաւագաց՝ դպրաց, և ամենայն
ուխտի մանկանց եկեղեցւոյ. զնոր։
Վ֊ան բարեպաշտ թագաւորաց և
ազատեր իշխանաց՝ զօրավարաց և
զօրաց նոցին. զսէր աղա։
Վ֊ան զի տէրն ամենակալ հնազան֊
դեցուսցէ առաջի նց զնա պատե֊
րազմունս իշխանացն. զսէր աղա։
Զաղաւթս հարց և եղբարցն մերոց՝
որք ի գերութեան են և ի չար
ծառայութեան. զսէր աղա։
Զաղաւթս ճանապարհորդաց և նա֊
ւորդաց՝ խաղաղութեամբ հասա֊
նել ի նաւահանգիստն բարութե֊
զսէր աղաչեա։
Զաղաւթս հիւանդաց՝ և ամենայն
վշտացելոց՝ փութապէս առողջու֊
թեան. զսէր աղա։

Յաղագս բարեխառնութեան օդոց՝ անձրեւաց քաղցրութե՛ն, և պտղոց առատութեան. զտէր ա։

Յաղագս ուխտաւորաց և պտղաբերից ի՛ նը եկեղեցի՝ն. զտէր աղա։

Եւ յաղագս այնոցիկ, որք մատնեալք են ի՛ ձեռս անօրինաց վասն անուանն քրիստոսի. զտէր աղա։

Յաղագս հոգւոցն հանգուցելոց, որք ճշմարիտ և ուղիղ հաւատով ի՛ քրիստոս ննջեցին. զտէր ա։

Յաղագս փրկելոյ զմեզ աեառն մե՛ր յերեւելի և յաներեւոյթ թշնամ ւոյն. զտէր աղաչեսցուք։

մաղ Բարեխօս ունիմք սուրբ զմարիամ զաստուածածնէն զիաուաւորեալ և օրհնեալ միշտ սուրբ կոյսն. սուրբ գլուխանեսս մկրտիչն. ու՛ր զառաքեալսն նախաւկայն. ու՛ր զառաքեալսն և զմարգարէսն. զսրի և գյաղթող սուրբ զվկայսն։ Եւ զմեծ խոստովանողն քո՛ի զհայրապետսն մեր ու՛ր զնրբն գրիգորիոս լուսաւորիչն հայաստանեայց աշխարհի։

Յիշեսջիք և զմեմ սուրբս և նոքօք
զաէր աղաչեսցուք ։
Օ՛երեկս մերթեալ և զառաջակայ
գիշերս խաղաղութիւն անցուցանել՝
հաւատով՝ ի տնէ խնդրեսցուք ։
Օ՛հրեշտակ ։ Օ՛քաւութիւն ։ Օ՛սրբոյ ։
Եւ ևս ։ Օ՛անձինս ։ Ողորմեաց ։

Քարոզ՝ ի ածի սրբոց, և պահոց ։

Եւ ևս խաղաղութեան զաէր ա ։
Աղաչեսցուք զամենակալն Ած՝ ըզ
հայր տեառն մերոյ Յիսուսի քրիս-
տոսի զիաւսաւորն խաղաղութեան
յաղագս խաղաղութեան. և վասն
միայնոյ սուրբ կաթուղիկէ և առա-
քելական եկեղեցւոյ. զի զբաղում
ամն խաղաղութեամբ տացէ մեզ
տէր աստուած մեր. և զիաւսաւո-
րըս խաղաղարարս առաքեսցէ առ
մեզ, վասն մեծի սուրբ և ահաւոր
անուան իւրոյ. զպետս գաւառաց,
զզօրավարս, զզօրապետս, զժողո-
վուրդս, զմուտս և զելս մեր խա-
ղաղութեամբ պահեսցէ. և զմեմ
պատեպազմունս թշնամւոյն խոր-

տակեսցէ ՚ի մէնջ . տէրն ամենա-
կալ կեցուսցէ և ողորմեսցի : Օ-
րեւհս մերձեալ՝ և զառաջիկայ գի-
շերս խաղաղութեամբ անցուցա-
նել հաւատով ՚ի տէրունէ խընդ-
բեսցուք : Օ. հրեշտակ : Օ. քաւու-
թի : Օ. սրբոյ խա : Կ՚ ևս : Օ. անձինս :

Աղօթք :

Աղօթք.

Լուր ձայնից մերոց տէր ամէն մեր.
ընկալ զաղաչանս մեր , զհամբար-
ձումն ձեռաց մերոց՝ և զբանս ա-
ղօթից , արբեալ զերեկոյի պատա-
րագս մեր ՚ի հոտ անուշից՝ ՚ի հա-
ճոյս քեզ պատրաստել : Յաւել ՚ի
մեզ տէր ամենակալ՝ զհաւատս ,
զյոյս , զսէր , և զամենայն գործս
առաքինութեան . որպէս զի ըստ
կամաց քոց բարեսիրաց՝ միշտ կրօ-
նասրեալք բարեպաշտութեամբ
՚ի տուէ և ՚ի գիշերի . և արժանա-
ւորք եղիցուք յաղագս անձանց մե-
րոց վրկութեան , և վասն հոգևոր
կենացդ աղաչել զքեզ տէր , և զք

տանել ՚ի քէն զշնորհս և զողոր-
մութիւն. և զոհանալով փառա-
ւորեցուք զՀայր և զորդի և զնր
հոգիդ. այժմ և միշտ և :

Խաղաղութիւն ամենեցուն :

Ընդ երկիւղածանելով տէր ա-
մէն՝ զոհանամք զքէն յաղագս խա-
ղաղութ անցուցանելոյ ՚ի մէնջ
զերկարութիւն տունջեանս : Տուր
մեզ տէր աղաչեմք զքեզ՝ զերեկս
և զառաջակայ գիշերս առանց մե-
ղաց, և առանց գայթակղութեան
անցուցանել. հաստատուն կալ և
ճնալ ՚ի հաւատ՝ ՚ի յոյս՝ ՚ի սէր՝ և
՚ի պատուխրանապահութեան քոյ :
Խնդրելով զխաղաղութիւն ամենայն
աշխարհի, և եկեղեցւոյ քում սըր-
բոյ զհաստատութիւն, և անձանց
մերոց զփրկութիւն : Որպէս զի ըն
դունելով ՚ի քէն զՀայցուածս մեր՝
և զմեծ վայելչական փառաբանու-
թիւն միշտ ՚ի բարձունս առաքես
ցուք ամենազօր տէրութեանդ
քրիստոս աստուած մեր. այժմ և :

Եւ ասէ Սուրբ աստուած՝ քան պատշաճէ։

Սուրբ աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ։

Երէց՝ կրկնէ։ Ընդ միւթ փոռուրեալն՝ գոչեսի ի ԽԲ–ն, 259։

Մաղթանք։

Փրկել զմեզ ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց։

Քարոզ։

Եւ ևս խաղաղութիւն զտեր աղա։ Վասն լսելի լինելոյ տեառն աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ աստուածածնին։ Եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան և գթութեան տեառն աստուծոյ։ Ընծայել տէր աստուած մեր, կեցո և ողորմեա։ Օրհնութիւն և փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և։

Խաղաղութիւն ամենեցուն։

Ընդունարձակ զաչս իմ՝ ի լերինս, ուստի եկեսցէ ինձ օգնութիւն։

Օգնութիւն ինձ ՚ի ձեռն եկեսցէ,
որ արար զերկինս և զերկիր։
Մի տար ՚ի սասանումն զոտն քո.
և մի՛ նինջեսցէ պահապան քո։
Արդեօք ոչ նինջէ՝ և ոչ ՚ի քուն եղբ
Թող պահապանն Իսրայէլի։
Տէր պահեսցէ զքեզ, և տէր ընդ
կալցի աջոյ ձեռամբն իւրով։
Ընդ ցորեան ՚ի տուէ քեզ մի՛ մեղիցէ,
և մի՛ լուսին ՚ի գիշերի։
Տէր պահեսցէ զքեզ յամէ չարէ.
պահեսցէ տէր զանձն քո։
Տէր պահեսցէ զմուտս և զել քո՝
յայսմ հետէ մինչեւ յաւիտեան։

փառք հօր և որդւոյ և։

Աստ ասի համբարձի շարական ըստ պատշաճի։
Պրակամաի զայս ասա։

Սիրեցի ես տէր զծրումթեամն ի՛ աձ
բնակեալդ ես ՚ի յերկինս. և բան
բեբանիս ՚ի սրտիդ քոյ։ Երկնայինն
զօրա՛թիւնք սերովբէք և քերո՛վ
բէք. անդադար օրհնեն սուրբ զա՛
նուանդ քո։ Քահանայք ընդ նո՛

սին պաշտօնեայք և ժողովուրդք. երկրպագեցան տէրունեան ըստ քո[ւ]
յոյժ ոյսառաջքան զյաւիտեան՝ ես
ի հօրէ առաքեցար, և լուսով ի
մանկանէ լցեր զարարածս. ծրհ.
նեաղ ես թագաւոր յաւիտենից:
Որ լուցյան ի սկզբան հաստատե
ցեր վերնատուն. և զիսաւարն ան
պիտուիեան յարուիեամբդ քո
հալածեցեր. ծրհ: Ուստի և մեք
լուսաւորեալքս ընդ լսեսդին զը
սարկեցաք. երգեցողք ցնծուիեր
ի յարուիեան երեկոյիս. ծրհ:
Երկնաքաղաքացին յոյհսանեկս մեծ
ի ծնեալդս կանանց, քարոզէր յա
նապատի ազգ արարող բարեաւոյն.
ընծագործըն լուսոյ արեգականն ար
դարուիեան: Ձրշմարիտ մարգարէ
և ձեռնադրող որպէսցի աստուծոյ.
յանաչընիմք կարապետ և պատ
մող աստուածային ծրինացն. հոգի
դէր ճանապարհս թագաւորին յա

ւիտեներից։ Յանօրէն գինաբերութեան մասին հետեւեալ խօսքով. Ի պատճառէ մանկանց խմելոյ զինի մատչին. զինի ցանկալ զարուեստսն և զանաղճա լսատերն։ Փառք հօր։ Սըրբուհուդ ատուածածնին բանիս խոսանիմ ամէնասուրբ երրորդութեանդ. զյարուքիւն յուսոյ կենացըն յաւիտենից։ Ամէն։ Օհատատացեալ ժողովուրդս ամէն երրորդութեան. և զապաւինեալս ի խորան փառացդ. պահեա անխլուռելի ի խաղաղութեան։ Ընդ քո յարութիւդ օրհնեմըք մարդասէր. աղաղակելով սէր փառըք։ Օդ օրհնեն սերովբէքն և գովեն քերովբէքն. աղա։ Ընդ պատրաստ թեւանոյ անհանգիստ բարբառոյ. աղա։

Ընտեալ ես մեր զօրհնութիւնս հրեշտակացն երգե՛ցի՛ք, և՛ անեղիք

դկ

փա՛ռք յաւուրս թեան քո տէր։ Որ
խոչեցար վա՛ս մեր Թագուհեցա՛ւդ.
եւ յարեա՛ւ ազատեցեր ի մեզանց։
Աբ՛ տա՛ծ, սո՛ւրբ եւ հզո՛ւ.
սո՛ւրբ անմահ Թադաւո՛ր։

դկ Ա՛յսօր մարտիրոսաց պատքըն ցըն-
ծացեալ բերկրին ընդ առաքե՛լսն,
քրիստոսի որդո՛ւյն աւ։ Զայն ի
յերկինից վըճռեալ ասե. եկայ՛ք
օրհնեա՛լքըդ հօր իմո՛ւ, ժառանգ-
պորդ երկնից խոստանայն։ Ըզկե՛ք
ըզառեղի անկելոցն ապըստամբո՛ւա-
կան Թըշնամո՛ւն, որ ի յերկինից
վայր անկեա՛լ։

դկ Ա՛ղաչեն աղօթք իմ տէ՛ր ի տա
ճա՛ր սո՛ւրբ քո. և առաքեա՛ ի մեզ
տէ՛ր պնդուԹիւն ի լեռնէ սրբ
բոյ քոմմէ։ Հոգեառացի՛ աղ քո
տէ՛ր ի վերայ լսաեղծուա՛ծոց քոց.
և առաքեա՛ ի մեզ տէ՛ր։ Օ՛ երեկո
մի՛ աղՀա մեր ընկալ տէ՛ր բարե-
խօսուԹեամբ ծընողի քո. և առա։

Պ ասն խաղաղութեանն ամ աշխարհ քրդ
հի, և հաստատութեան սրբոյ եկ
եղեցւոյ զամէն աղաչեսցուք: Ա-
ստուածք ամէնն միաբանութեամբ:
Տէր ողորմեա. տէր ողոր. տէր ո:
Սուրբ գԹած՝ բարեխնամով՝ արա ազ
րիչ ամենայն արարածոց. ընկալ զղ
պաղատանս ծառայից քոց՝ ի ժամ
երեկոյիս. որ առատ ես առ ա
մենեսեան՝ պարգևօք բարերարու
թեան քո: Ողորմեա տէր ամենայն
աշխարհի, և եկեղեցւոյ քում սըր
բոյ. հիւանդաց՝ վշտացելոց՝ ճանա
պարհորդաց՝ նաւորդաց՝ խոստովա
նողաց՝ ապաշխարողաց՝ և հոգւոցն
հանգուցելոց: Օ՛ի դու տէր ամե
նակալ՝ գիտես զպէտս մեր՝ և զկա
րիս առաւելքան զոր խնդրեմք և
խնդամք. և քեզ ընդ որդւոյ և ա
մենասրբոյ հոգւոյդ վայելէ փառք
իշխանութիւն և պատիւ. այժմ և:

Յառաջ աղաւհացից ասա ասի՝ Տէր ամենակալն. և
ի՛ր քարոզն և Աւգնեան. փնտ՛ի էջ 284. յառաջ
ա՛մառն, եւ յետ նորա՝ Որ բնակեալն: Իսկ յայլ ա

հոգիս պահող, և ի գծիս մարդիրոսաց՝ ասի Տիրոջ որ բնակեալն. և ի վերամուտս՝ Աստ օրհնեցէք։

Աւրհնական փախ։

Որ բնակեալն է յօգնութիւն բարձ բելոյն, ընդ հովանեաւ աստուծոյ յերկինս հանգիցէ։

Ասացէ ահն ընդունող իմ ես, ապաւէն իմ ահձ, և ես յուսամ ի նա։ Նա փրկեացէ զիս յորոգայթէ որսողին, և ի բանիցն ի խառնակութիւն։ Ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ։ ի հովանի թևոց նորա յուսասցիս։ Որպէս զէն՝ շուրջ եղիցի զքեզ ճշմարտութիւն նորա։

Ոչ երկիցես դու յերկիւղէ գիշերի, և ոչ ի նետէ՝ որ թռչի ի տուէ։ Ցիրէ որ ջրգի ի խաւարի, ի գայթակղութենէ դիւին ի հասարակ աւուր։

Ընկիցի ի կողմանէ քումմէ հազարք, և բիւրք ընդ աջմէ քումմէ. և առ քեզ ինչ ոչ մերձենայցի։ Բայց միայն աչօք քովք հայեսցիս դու, և զհատուցումն մեղաւորաց

տեսցես. զի դու տէր յոյս իմ ես։
Ո՛բարձրեալն արարեր քեզ ապա-
ւէն. զի ոչ հասցեն առ քեզ չարք,
և տանջանք մի մերձեսցին ի յար-
կըս քո։
Հրեշտակաց իւրոց պատուիրեալ
է վասն քո, ի պահել զքեզ յամե-
նայն ճանապարհս քո։
Ի բազուկս իւրեանց ընկալցին զքեզ.
զի մի երբեք հարցես զքարի զոտն քո։
Ի վերայ իժից և քարբից գնասցես
դու, և առ ոտն կոխեսցես զա-
ռիւծն և զվիշապն։
Քանզի յիս յուսացաւ, և փրկե-
ցից զնա. հովանի եղէց նմա, զի
ծանեաւ զանուն իմ։
կարդասցէ առ իս՝ և ես լուայց նո-
մա. և առ նմա եղէց ի նեղութեան։
փրկեցից և փառաւորեցից զնա. երկայն աւուրբք լցուցից, և
ցուցից նմա զփրկութիւն իմ։
Ընդ քեզ տէր համբարձի զաչս իմ,
որ բնակեալդ ես ի յերկինս։
Որպէս աչք ծառայի ի ձեռն տե

խոյ, և որպէս աչք աղախնոյ 'ի
ձեռն տիկնոջ իւրոյ։
Ա՛յնպէս են աչք մեր առ քեզ տէր
Աստուած մեր. մինչև ողորմեսցիս 'ի մեր։
Ողորմեա մեզ տէր ողորմեա մեզ.
զի բազում լցաք արհամարհանօք։
Եւս առաւել լցան անձինք մեր նախ
հատանօք, որք նախատէին զմեզ.
և արհամարհանօք ամբարտաւանից։
Ընդ յանուրս քում կեցո զիս, և 'ի
զօրութեան քում իրաւ արա զինձ։
Ստուգած լուր աղօթից իմոց, ունկն
կընդիր բանից բերանոյ իմոյ։
Օտարք յարեան 'ի վե՛ր իմ, և հզօրք
խնդրեցին զանձն իմ, և ոչ համա-
րեցան զքեզ առաջի իւրեանց։
Ա՛հա Աստ օգնական իմ, և տէր ընկ
դուն հոգւոյ իմոյ։
Դարձո՛ւսցես զչարն 'ի թշնամիս
իմ, ճշմարտութե՛ամբ քում սատակեա զնա։
Ես կամօք իմովք պատարագս մա-
տուցից քեզ. և խոստովան եղէց
անուան քում տէր, զի բարի է։
Յա՛մ նեղութե՛ էն ամէն փրկեցեր զիս,

և ՚ի թշնամիս իմ հառեա զաչս իմ։
փառք հօր և որդւոյ և։

Սաղմոսք։

Օ՚ բարձրեալն զբրիատոս արասցուք
մեզ ապաւէն, զի ոչ հասցեն սա
մեզ չարք. և տանջանք մի մերձեա
ցին ՚ի յատեակս մեր։

Քառող։

Եւ մեք միտքս զողորմութիւն ՚ի
սեառնէ խնդրելով, առաջաւորք ա
ննեքեան միաբանութեամբ։

Տէր ողորմեա. տէր ողորմ. տէր օ։

Աղեթք։

Յոյս կենաց՝ ընդունող աղօթից՝
քաւիչ մեղաց և կատարիչ խնդրո
ւածոց քրիատոս աստուած մեր.
ընկալ զպաշտաման մեր ՚ի ժամ ե
րեկոյիս՝ բարեխօսութեամբ սուրբ
աստուածածնիդ և աղաչանօք ամ
ենայն քոց։ Քու մեզ տէր և ո
ղորմեա. ներեա քաւեա և թող
զմեզս մեր. արժանաւորեա զո
հութիւս միաւորել զբեզ ընդ հօր
և ընդ սրբոյ հոգւոյդ. այժմ և

Յիշեա տէր զպաշտօնեայս քո։
Բարեբար և բազմաողորմ ած՝ քո։
Հայր մեր որ յերկինս ես։

Փախ կիրակամուտից։

Արդ օրհնեցէք տէրունական ծառայք տեառն զտէր. ո կայք ի տուն տեառն, և ի գաւիթս տանն Աստուծոյ մերոյ։ Ի գիշերի համբարձեք զձեռս ձեր ի սրբութիւն. և օրհնեցէք զտէր։ Օրհնեսցէ զձեզ տէր ի սիովնէ. որ արար զերկինս և զերկիր։ Խոստովան եղէց քեզ տէր՝ բոլորով սրտիւ իմով. առաջի հրեշտակաց սաղմոս ասացից քեզ։ Ծի լուար զբանս բերանոյ իմոյ. երկիւղածից ի տաճար սուրբ քո. և խոստովան եղէց անուան քումմ, վասն ողորմութեան և ճշմարտութեան քոյ։ Արձ արարեր յամենայնի զանուն սուրբ քո. յորում աւուր կարգամ առ քեզ, վաղվաղակի լուր ինձ. և բազում արասցես զօրու-

Թիւնս յանձն իմ։
Խոստման եղիցին առ քեզ ամենայն լծապատուիք երկրի, զի լուան զբանս բերանոյ քո, և օրհնեսցեն զճանապարհս քո։
Սեծ են վաստք ճան. բայց է տէր. զիոնարհս առնանէ, և զբարձունս 'ի հեռատեսանէ ճանաչէ։
Թէ գնասցես ես 'ի մէջ նեղութեանց, կեցուսցես զիս 'ի բարկութենէ թշնամեացն։
Զեցեր զձեռն քո՝ և փրկեաց զիս աջ քո, և տէր հատուսցէ ընդ իմ։ Տէր ողորմութիւն քո յաւիտեան. զգործս ձեռաց քոց մի՛ անտեսես տանել։
Ընտրեաց յանուն քում կեցս զիս։

և այլ տղէս 'ի թիւն 488։

Փառք հօր և որդւոյ և։

Քաղ։

Խնդրեսցուք հաւատով միաբանութեամբ 'ի տեառնէ՝ զի զողորմութիւն քեան զընտրեալս իւր արասցէ 'ի վերայ մեր։ Տէրն ամենակալ կեցուսցէ և ողորմեսցի։

կեցո՛ տէր։

Տէր ողորմեա՛. տէր ճղճղ. տէր՝ ո։

Աղօթք։

Թագաւոր խաղաղութեան օգնական և վրկիչ անձանց մերոց քրիստոս աստուած մեր. պարսպեալ պահեա զժողովուրդս քո ընդ հովանեաւ սուրբ և պատուական խաչիդ քոյ՝ ի խաղաղութենէ։ Փրկեա յերեւելի և յաներեւոյթ թշնամւոյն. արժանաւորեա զոհութիւն փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյդ. այժմ և միշտ և։

Հրամայ խաչն։

Սուրբ խաչիս աղաչեսցուք զգ տէր. զի տամբ փրկեսցէ զմեզ՝ ի մեղայ՝ և կենդանացէ չնորհիւ ողորմութեան իւրոյ։ Ամենակալ տէր ամէն մեր կեցո և ողորմեա։

Աղօթք։

Պահպանեա զմեզ քրիստոս ամէն մեր՝ ընդ հովանեաւ սուրբ և պատուական խաչիդ քոյ՝ ի խաղաղութեան. փրկեա յերեւելի և յանե-

թեւոյթ Թշնամոյն : Ընժանաւորհա զոհութեամբ փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյդ . այժմ և :

Խրատք վասն երիտասարդ Թեան եկեղեցւոյ :

Որթախ եղէ ես՝ ոյք ասէին ցիս, ի տուն աւետառն երկիւղ մեք : Հասեալ կայի ոտք մեր առ դրանս քո երուսաղէմ : Երուսաղէմ շինեալ որպէս քաղաք . և բնակութիւն իւր շուրջ զնովաւ :

Ընդ ելանէին ազգք՝ ազգք տեառն . ի վկայութիւն իսրայէլի , խոստովան լինել անուան տեառն :

Ընդ արկեալ են աթոռք դատաստանի . աթոռս արկեալ են ի տան դաւթի :

Հարցէք զողջունել երուսաղէմի , և շինութիւնն՝ ոյք սիրէք զտեր : Եղիցի խաղաղութիւն ի զօրութեանդ , և շինութիւն յաշտարակս յամարս քո :

վ՝ասն եղբարց և ընկերաց իմոց խօս
անցայ զխաղաղութիւն. վասն քոյ
և վասն տան տեն այ մերոյ խնդրե-
լեցաք զբարութիւն ի քէն:
Տուր զօրութիւն ծառայի քո. կեցո
զորդի աղախնոյ քո. և արա առ իս
նշան բարութեան:
Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն.
զի դու տէր օգնեցեր ինձ, և մխի-
թարեցեր զիս:
Փառք Հօր և որդւոյ և:

Ձայն ևկեղեցւոյ:

Աբ եկեղեցեաւս աղաչեսցուք զնո՝
զի սուաւ վրկեսցէ զմեզ ի մեզայ.
և կեցուսցէ չնորհիւ ողորմութե
իւրոյ: Ամենակալ տէր տուր մեր՝ կե-
ցո և ողորմեա:

Աղօթք:

Ար զրան սրբոյ եկեղեցւոյս, և ա
ռաջի առաւուտընկալ և պայծա
ռացեալ առբր նշանացս՝ խոնար
հեալ երկիւղիւ երկիւղածութեամբ.
զառբր և զհրաշալն և զյաղթօղ
տերութիւնդ քո օրհնեմք և փա-

ռաւօրեմք. և քեզ մատուցանեմք
զօրհնութիւն և զփառս հօր և
որդւոյ և հոգւոյդ սրբոյ. այժմ և:

Փոխ:

Ընդունեցեալ առ մեր ամենայն
երկիր. ծառայեցէք տեն ուրախու-
(տե՛ս էջ 312): Օ֊ձին ըմն ասա. և փառ փո֊ր:

Քաղ:

Օրհնեսցուք զամենակալն Աստ ըզ
հայր տեառն մերոյ յիսուսի քրիս-
տոսի, որ արժանի արար զմեզ կալ
ի տեղւոջ փառաբանութեան և
երկնել զերկիս հոգեւորս: Ամենա-
կալ տէր Աստ մեր՝ կեցո և ողորմեա:

Աղօթք:

Ի մէջ տաճարիս, և առաջի Աստ ըն-
կալ և պայծառացեալ որ նշանա-
յըս, և որ անդանոյն խոնարհեալ
երկիւղիւ երկիրպագանեմք. զոր և
զհրաշալի և զյաղթօղ գյարու-
թիւն փառաւորեմք. և քեզ մատու-
ցանեմք զօրհնութիւն և զփառս ընդ
հօր և ընդ սրբոյ հոգւոյդ. այժմ:

Աղօթք.

Ի յարկի սրբութեանդ և ի տեղւոջ փառաբանութեանդ. հրեշտակաց բնակարանիս և մարդկան քաւարանիս, և առաջի ահաբնակալ և պայծառաց ցեալ աչք նշանացս և ականջք խոնարհեալ երկիւղիս երկիրպագանեմք. զքեզ և զհրաշալի և զյաղթող զյարութիւնդ քո օրհնեմք և փառաւորեմք. և ընդ երկնային զօրսն քեզ մատուցանեմք զօրհնութիւն և զփառս ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:





Կարգաւորութիւն հաւատացեալ աղօթից խաղաղական ժամուն։
Որ կատարի ի դէմ Հոգւոյն սատուածոյ, այլև ի դէմ Բա-
նին սատուածոյ՝ որ եգաւ ի գերեզմանի, և կենդ ի գժոխս, և
խաղաղութիւն արար հոգւոցն։

Երկնեցից զաչեր յամենայն ժամ,
յամենայն ժամ օրհնութիւն
նորա ի բերան իմ։
Ի տէր պարծեսցի անձն իմ, լսե-
ցեն հեզք, և ուրախ եղիցին։
Մեծ արարէք զտէր ինձեւ, և բարձր
արասցուք զանուն նորա ի միասին։
Խնդրեցի ի տէնէ և լուաւ ինձ, յա-
մենայն նեղութենէ իմմէ փրկեաց զիս։
Մատիք առ տէր՝ և առէք զլոյս, և
երեսք ձեր մի՛ ամաչեսցեն։
Ես այս աղքատ կարդաց առ տէր, և
տէր լուաւ ամա, յամենայն նեղու-
թենէ սորա փրկեաց զսա։
Բանակ հրեշտակաց տեառն շուրջ

են զերկիւղածսն իւրոյք, և պա-
հեն զնոսա։
փառք հօր և որդւոյ և։
Եւ ևս խաղաղութեան զտէր ա։
Օրհնութիւն և վասք։

Երգ առաքեանց։

Ի նեղութեան իմում ես առ Տէր
կարդացի, և լուաւ ինձ Տէր, վըր-
կեաց զանձն իմ՝ի շրթանց նենգա-
ւորաց և՝ի լեզուէ չարէ։
Օ՛ի ասպի քեզ կամ զին՞ չ յաւել-
ցի՝ լեզու նենգաւոր։

Օ՛ղանեան բովանդակ ասա։ Ասպ ոմանք այլեւս չ-
գրեն. վ երգ առաքեանց է։

Սաղմոս. ճէ։

Տէր առատասած վրիժութեան ի-
մոյ, ՚ի տուէ կարդացի և դի-
շերի առաջի քո։
Մտցեն աղօթք իմ առաջի քո տէր,
խոնարհեսցի ուշիմ քո ՚ի խընդրըս
ուսածս իմ։
փառք հօր և որդւոյ և։
Եւ ևս խաղաղութեան զտէր։
Օրհնութիւն և վասք։

Խաղաղութիւն առնեցուն։

ի կարդալ իմում լսաւ ինձ ած
ընտ ապաւէն իմ, ի նեղութիւն
ինձ անդադար ապաւէն. ողորմեա ինձ
և լսաւ աղօթից իմոց։
Որդիք մարդկան մինչեւ յե՞րբ էք
խաստախոտք. ընդէ՞ր սիրէք զնանց
թութիւն, և խնդրէք զստութիւն։
Ծաներ թուք զի սքանչելիս արար Տէր
սրբոյ իւրում. և տէր լսէ ինձ
ի կարդալ իմում առ նա։
Բարկանայք և մի մեղանչէք. զոր
ինչ ասէք ի սիրտս ձեր՝ յանկողինս
ձեր զղջացարուք։
Մատուցէք պատարագս արդարու
թեան, և յուսացարուք ի տէր։
Բազումք ասեն թէ ո՞ ցուցէ մեզ
զբարութիւն տեառն. նշանեցաւ
առ մեզ լոյս երեսաց քոց, և ե
տուր ուրախութիւն սրտից մերոց։
Ի պտղոյ ցորենոյ գինւոյ և ձիթոյ
իւրեանց լցուցեր զնոսա։
Խաղաղութեամբ յայս և ի սոյն
ննջեցուք և զարթիցուք. զի դու

տէր միայն առանձին յուսով քով
բնակեցուցեր զմեզ։
Տէր մի՛ սրամտութեամբ քով յան-
դիմաներ զիս, և մի՛ բարկութեամբ
քով խրատեր զիս։
Ողորմեա ինձ տէր զի հիւանդ եմ
ես. բժշկեա զանձն իմ, զի խռո-
վեցան ոսկերք իմ։
Ընձն իմ յոյժ խռովեցաւ, և դու
տէր մինչեւ յերկրէ։
Դարձ տէր և փրկեա զանձն իմ. կեց
ցո զիս տէր ըստ ողորմութիւն քոյ։
Ո՛չ ոչ ոք է որ՝ ի մահու յիշէ զքեզ, կամ՝ ի դժոխս խոստովան
առնիցի առ քեզ։
Վատակեցայ ես՝ ի հեծութեան
իմում, լուացի զամենայն գիշեր
զմահիճս իմ. և արտասուօք իմովք
զանկողինս իմ ծածկեի։
Խռովեցաւ՝ ի սրամտութենէ աչն
իմ. և մաշեցայ ես՝ ի վերայ ամե-
նայն հակառակաց իմոց։
Ի բաց կացէք յինէն ամենեքեան,
զի գործէք զանօրէնութիւն։

Լուաւ ձեր ձայնի լալոյ իմոյ, լուաւ աչեր աղօթից իմոյ. և տէր զկնի դրուածս իմ ընկալաւ։

Ընդհեսցեն և խռովեսցին յոյժ ա մենայն թշնամիք իմ. դարձցին յետս և ամաչեսցեն յոյժ վաղվաղակի և խռովեսցին։

Մինչեւ յե՞րբ տէր մոռանաս զիս հապաւ, մինչեւ յե՞րբ դարձուցանես զերեսս քո յինէն։

Մինչեւ յե՞րբ դնեմ զխորհուրդս յանձն իմ, և ցաւք սրտի իմոյ զաւուրս։

Մինչեւ ցե՞րբ բարձրանայ թշնամին ի վերայ իմ. նայեա և լուր ինձ տէր աստուած իմ։

Լոյս տուր աչաց իմոց, զի մի երբեք ննջեցից ի մահ։

Մի ասասցէ թշնամին թէ յաղթեցի նմա, կամ նեղիչք իմ ցնծասցեն թէ ես սասանեցայց։

Ես յոյսս առ քեզ արկի տէր յուսացայ, ցնծացաւ սիրտ իմ ի փրկութեան քումմ. օրհնեցից զտէր

զբարեբարդ իմ։
Պահեա զիս աստուած իմ զի ես ի քեզ յոյսացայ. աստղի սեաւն, տէր իմ ես դու, և բարիք իմ ինձ ի քէն են։
Սրբոց որք են յերկրի քում, սքանչելի արարեր զամենայն կամս իմ ի նոսա։
Յաճախեացին հիւանդու նք նոցա. յետ այսորիկ ապա վազվազեսցին։
Ո՛չ ժողովեցայց ի ժողով նոցա յարեանց, և ո՛չ հիշեցից զանուա նս նոցա ի շրթունս իմ։
Տէր բաժին ժառանգութեան իմոյ և բաժակի իմոյ. դու ես որ այսբէն դարձուցանես զժառանգութիւն իմ ինձ։
Վիճակք եղեն ինձ ընդ ընտիրս, և ժառանգութիւն իմ հաճոյ եղև ինձ։
Օրհնեցից զտէր որ խրատուն ա բար զիս, մինչ ի գիշերի ևս խրատ ետցին զիս երիկամունք իմ։
Յառաջագոյն տեսանէի զտէր առաջի իմ յամենայն ժամ, զի է ընդ

աջմէ իմմէ զի մի սասանեցայց։
Վասն այսորիկ ուրախ եղեւ սիրտ
իմ, և ցնծացաւ լեզու իմ, եւ՝ և
մարմին իմ բնակեսցի յոյսով։
Զի ոչ թողցես զանձն իմ ՚ի դժո-
խըս, և ոչ տացես սրբոյ քոմ տես-
սանել զապականութիւն։
Ճանչեր լինէ ինձ զճանապարհս քո կե-
նաց, լցուցեր զիս ուրախութեամբ
երեսաց քոց ՚ի բաղցրութենէ վա-
յելչութեան աջոյ քո մինչ իսպառ։
Վասն տէր արդարութեան, և նայ-
եա ՚ի խնդրուածս իմ. ունկն դիր
աղօթից իմոյ՝ զի ոչ շրթամբք նեն-
գաւորաց։
Ճերեսաց քոց իրաւունք ինձ ելցեն,
և աչք իմ տեսցեն զուղղութիւն։
Փորձեցեր զսիրտ իմ և քննեցեր ՚ի
գիշերի, փորձեցեր զիս՝ և ոչ գտաւ
չիս անիրաւութիւն։
Ա՛ի խօսեսցի բերան իմ զգործս
որպէս մարդկան. վասն բանից
շրթանց քոց ես պահեցից զճանա-
պարհս խիստս։

Հաստատեա զբաւխդա իմ ի ճանա-
պարհի քոմ, զի մի գայլ ակղեա-
ցին գնացք իմ։
Ես առ քեզ տէր կարդացի՝ զի լսեալ
լինէ աստուած, խոնարհեցո առ իս
զականկն քո և լսել բանից իմոց։
Ակքանչելի ողորմութիւնս
քո. ո՛ փրկես զյոնոսիկ զոք յոտս
ցեալ են ի քեզ, յայնցանէ զոք
հակառակ կան աջոյ քո։
Պահեա զիս որպէս բիբ ականն. ընդ
հովանեաւ թեւուց քոց ծածկեսցես
զիս յերեսաց ամբարշտաց՝ զոք տա-
ռապեցուցին զիս։
Թշնամիք զանձն իմ պաշարեցին, և
ի ճարպս իւրեանց արգելին, և բե-
րանք նոցա խօսեցան զամբարտա-
ւանութիւն։
Երթեցին զիս և այժմ դարձեալ
պատեցան զինեւ. ուշ եդին խո-
նարհեցուցանել զիս յերկիր։
Համարեցան ինձ որպէս առիւծ զի
պատրաստի յորս, և որպէս կորիւն
առիւծու զի նստի դարանեալ։

Ըրի տէր ժամանեա նոցա և խա-
փանեա զնոսա. փրկեա զանձն իմ
յամբարշտացդ ի սրոյ և ի ձեռաց
Թշնամւոյն։
Տէր կորո զնոսա յերկրէ, բաժան-
եա և խափանեա զնոսա ի կեանս
իւրեանց։
Պատնեաջ քովք լցան սրովայնք
նոցա, յագեցան կերակրովք և
Թողին զմնացուածս տղայոց իւ-
րեանց։
Ես արդարութեամբ երեւեցայց
երեսաց քոց. և յագեցայց յերե-
ւիլ փառաց քոց։
Դատ արա ինձ աստուած, և իրաւ
արա ինձ ի դատաստանի իմում։
Յազգէ որ ոչ է սուրբ, ի մարդոյ
մեղաւորէ նենգաւորէ փրկեա զիս։
Դու ած հզօրիչ իմ ես՝ ընդէր մո-
ռացար զիս, ընդէր տրտում գնամ
ես ի նեղել Թշնամւոյ իմոյ։
Ընաբեա տէր զլոյս քո և զճշմար-
տութիւն քո, զի առաջնորդեսցեն
ինձ և հանցեն զիս ի լեառն սուրբ

և ՚ի յարկս քո։

Մոխց առաջի սեղանոյ ՚ից առ ՚ած,
որ ուրախ առնէ զմանկութիւն իմ։
Խոստովան եղէց քեզ օրհնութիւ-
առուած առուած իմ։
Երդ՝ ընդէր տրտում ես անձն իմ,
կամ ընդէր խռովես զիս. յոյսա
առ աստուած, խոստովանեցա նմա՝
փրկիչ երեսաց իմոց աստուած է։
Ընտուած յօդնել ինձ նայեաց. և
ահ յընկերել ինձ փութիա։
Ընդաչեսցեն և յամօթ լիցին, որ
խնդրէին զանձն իմ. դարձցին յետս
և ամաչեսցեն, որ խորհէին ինձ
չար։
Դարձցին առ ժամայն ամաչեցեալք,
որ ասէին ինձ վաշ վաշ։
Ցնծասցեն և ուրախ լիցին ՚ի քեզ
ամենն, որ խնդրեն զքեզ ահ-
Ընտրեսցեն յամենայն ժամ, մեծ է
աստուած. և որ սիրեն զփրկու-
թիւնս քո։
Ես աղքատ և տնանկ եմ, ՚ած օգ-
նեա ինձ. օգնական և փրկիչ իմ

ես. և դու տէր իմ՝ մի յամեներ։
Տուր զօրութիւն ծառայի քո. կեցո
զորդի աղախնոյ քո. և արա առ իս
նշան բարութեան։
Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն.
զի դու տէր օգնեցեր ինձ, և մխի-
թարեցեր զիս։
Փառք Հօր և որդւոյ և։

ԵՒԹ.

Ընդհեա՛ մեզ տէր, ի գիշերի
վերինսային ըղձատաղտուկի քո.
և պահեա՛ զմեզ ի պատրանաց թըշ-
նամւոյն՝ ամենայայտի զօրութիւ-
սուրբ խաչի քոյ։ Տէր ասասա՛ծ
փրկութեան իմոյ՝ ի տուէ կարդա-
ցի՝ և գիշերի առաջի քոյ։ Մոցեն
աղօթք իմ առաջի քո տէր. խո-
նարհեսցի ունկըն քո՝ ի խընդրուա-
ծըս իմ։ Լսեսցե՛ առ մեզ ա՛ր պա-
հապան՝ ի քէն և պահեսցէ ըզմեզ
յամ ժամ։ Ընդաքեա՛ ի մեզ տէր
զզօրութիւն սըրբոյ խաչին որ պա-

հեսցէ զմեզ յամենայն ժամ։ Ընդ
ժանիւ սրա տէր զերկնիս զայս խա
ղաղութեամբ, և առանց փորձու
թեան անցս ըզմեօք։ Ընժանաւոդ
բեամ տէր ըզդիշերըս զայս խաղաղ
ութեամբ և առանց մեզաց պա
հելով ըզմեզ։ Ընդ մեզ տէր աստ
ուած՝ գիտասջիք հեթանոսք և
պարտեցարուք. զի ած ընդ մեզ
է։ Եւ լուարուք զայս ի ծագաց
մինչեւ ի ծագըս երկրի. զի։ Եւ
հզօրացեալքըդ պարտեցարուք. զի։
Եւ զի թէպէտ և դարձեալ զօրա
նայք՝ դարձեալ ի պարտուի մատ
նեսջիք. զի։ Եւ զխորհուրդն զոր
խորհիք՝ խափանէ տէր. զի։ Եւ
զբանըն զոր խօսիք՝ մի մնասցէ առ
ձեզ. զի։ Եւ քանզի յերկիւղէ ձեր
մէ մեք ոչ երկիցուք, և ոչ խռովի
ցուք. զի։ Եւ զոր ած մեր փառա
ւոր արասցուք, և նա եղիցի մեզ
յերկիւղ. զի։ Եւ յուսացեալ եղև

ցուբ մեք ՚ի նա, և նա եղիցի մեզ ՚ի
սրբութիւն. զի ։ Եւ յոտասցեալ եղիցի
ցուբ մեք ՚ի նա, և նա եղիցի մեզ
՚ի փրկութիւն. զի ։ Եւ ահաւասիկ
ես և մանկունք իմ, զոր ետ ինձ
աստուած. զի ։ Եւ ժողովուրդ որ
նստեր ՚ի խաւարի՝ ետես լոյս
մեծ. զի ։ Եւ որ բնակեալդ էք ՚ի
խաւարի և ՚ի ստուերսն մահու,
լոյս ծագեսցի առ ձեզ. զի ։ Եւ
քանզի մանուկ ծնաւ, որդի և
տուաւ մեզ. զի ։ Եւ որոյ իշխանու-
թիւն իւր ՚ի վերայ ուսոց իւրոց.
զի ։ Եւ որ կոչի անուն նորա մե-
ծի խորհրդոյ հրեշտակ. զի ։ Եւ
զքանչելի խորհրդակից. զի ։ Եւ ած
հրզօր իշխան. զի ։ Եւ իշխան խա-
ղաղութ հայր հանդերձելոյ յաւի-
տենից. որ աստուած ընդ մեզ է ։
Եւ վասն զի հօր և որդւոյ և հոգ-
ւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւի-
տեան յաւիտենից. ամէն ։

Մաղթանք։

Ի մերձենալ երեկոյին՝ համբառնամք զձեռս մեր ի սրբութիւն. զոր լինիմ մեզաք այսօր խորհրդով բանիւ, կամ գործով. ի յանկողինս մեր պղծանալով. խոստովան լինել ըստ պատանիս սրտից մերոց ծածկապատում աստուծոյ. յուսալով յողորմութիւն քո։ Եւ մեք միաբան պաղատացուք. յիշեա զմեզ տէր, յորժամ գաս արքայութեամբ քով. և ողորմեա մեզ։

Քարոզ։

Եւս խաղաղութեան զաէր աւ։ Ծոհայարուք զանառանէ. որ խրատով ողորմութեն առաքինորդեաց մեզ ի գործս առնելեան. և շնորհեաց մեզ միաբան գալ հասանիլ ի հանդիսատ դիշերիս։ Եւ մեք յամենայն ժամ ապաչեսցուք զմարդասէրն Ած, լինիլ պահապան անձանց մերոց. և նա խրատով ողորմութեամբն սրտ հեսցէ զմեզ. և առաքինորդեալ հասուսցէ յիւր թագաւորութեան հան-

գիտան, զոր խոստացաւ սիրելեացն իւրոց ճշմարիտն աստուած յիսուս քրիստոս, տէրն ամենակալ կեցուցիչ և Հանգիստ գիշերիս։ Հրեշտակ։ Քաւութիւն։ Սրբոց։ Նշ եւս։ Անձինս։ Ողջմեաց։

Աղօթք.

Տէր բարերար, որ մեծաւ գիտութեամբ քով պատրաստեցեր գյաւիտենական հանգիստն աստ սրբիւթեամբ աշխատելոյն, և կշեցեր առ քեզ քաղցր ձայնիւ զծանրաբեռնեալսն և զտաժանեալսն մեղօք, հանգիստ նոցա խոստանալով։ Ընդհեա և մեզ տէր՝ անխռով խաղաղութիւք զգիշերս անցուցանել. և՝ի ծանրութենէ մեղաց զարթեալք՝ ապահովեա ողորմութեամբ քով. և արժանաւորեա մշտընջենաւոր հանգստեանն ընդ ամենայն սուրբս քո։ Նշ զոհանալով վասն ամենայնի զքեզ ընդհօր և ամենասուրբ հոգւոյդ, այժմ և միշտ և։

Պարզև ատուս բարեաց, և աղբիւր խաղաղութիւն տէր ատուածդ մեր. յամենայն ատանձնական խոտորմութեանց խաղաղացո զմիտս մեր և զխորհուրդս՝ ի գիշերիս յայսմիկ, և յամենայն ժամանակի։ Որպէս զի առաջնորդեալք յանցաւոր կենցաղոյս՝ ժամանեսցուք յաւիտենական երկնից արքայութիւն քո. զոր պատրաստեցեր ի սկզբանէ աշխարհի սրբոց քոց։ Եւ ընդ նոսին զոհաս նալով փառաւորեսցուք զՀայր և զորդի և զսուրբ Հոգիդ, այժմ և։

Սաղմոս խգ։

Տէրըդ իմ և կեանք իմ՝ ես յումմէ երկեսցի. տէր ապաւէն կենաց իմոց՝ ես յումմէ դողացայց։
Ի մերձենալ առ իս չարսց ուտել զմարմին իմ, նեղիչք իմ և թշնամիք իմ՝ նոքա տկարացան և անկան։ Թէ պատրաստակի ի վերայ իմ պատերազմ, ոչ երկիցէ սիրտ իմ, և թէ յարիցէ ի վերայ իմ ճակատ

տամարտ, սակայն և այսուհետ ՚ի քեզ աեր յուսացեալ։
Օմի խնդրեցի ՚ի ձեռնէ, և զայն ա՛ զաչեմ. բնակիլ լինիմ ՚ի տան տեառն զամենայն աւուրս կենացս իմոց։
Տեսանել լինիմ զվայելչութիւն տն, և հրամայեալ ՚ի տաճարի նորա։
Ծածկեաց զիս ՚ի խորանի իւրում յաւուր չարի. ընդ յարկաւ սրբոյ զիս ՚ի ծածկոյթի խորանի իւրում։
Ի վիմէ բարձր արարեր զիս. և այժմ բարձր արար զգլուխ իմ ՚ի վերոյ թշնամեաց իմոց։
Շուրջ եղէց՝ և մատուցից ՚ի խորանի նորա պատարագ օրհնութեան. օրհնեցից և ասացից տեառն։
Լուր աեր ձայնի իմում, զի կարդայի առ քեզ. ողորմեա ինձ և լուր լինիմ, զի քեզ ասաց սիրտ իմ. և խնդրեցին երեսք իմ, զերեսս քո աեր խնդրեցին։
Մի դարձուցաներ զերեսս քո յիմանէ. և մի խոտորիր բարկութեամբ ՚ի ծառայէ քումմէ։

Օգնական իմ լեր տէր՝ մի՛ անտես
գեր զիս, և մի՛ թողուր զիս աստ-
ուած փրկիչ իմ։
Հայր իմ և մայր իմ թողին զիս. և
տէր իմ ընկալաւ զիս։
Օրէնագէտ ա՛րա զիս տէր ի՛ճանա-
պարհի քումմ. և առաջնորդեա՛ ինձ
ի՛ շաւիղս քո ուղիղս։
Վասն թշնամեաց իմոց, մի՛ մատներ
զիս ի՛ ձեռս նեղչաց իմոց։
Յարեան ի՛ վերայ իմ վկայք սուտք.
և ստեցին ինձ չանօրէնութեան
իւրեանց։
Հաւատացի՛ տեսանել զբարութի-
ւն՝ յերկրին կենդանեաց. համբե՛ր
տեա՛ւն՝ և քաջալերեա՛ց. զօրացի՛
սիրտ քո և համբե՛ր տեա՛ւն։
Փառք Հօր և որդւոյ և։

Երգ տեառն Դերսխի։

Ա՛յսուհետ սիրով հայրդ գլխիս
ի՛ քո ստեղծեա՛լ գործըս ձե-
ռաց. և ըզքանաչըս հրեշտակաց

տուր պահապան մեզ տրկարացս. վըրկեա զանձինս ի փորձանացդ ի խաւարի ջրղող դիւաց. զի՞ ի տը֊ ւընջեան և դիշերի տացուք քեզ վասն անլռելի։

Ի՛ն անեզ անըսկըզբան ծընուն֊ դ անճառ օրդի և բան. որ արարեր ըզտի֊ գ՛ծոյ և ըզդիշեր ի հան֊ դիստ քնոյ. տա՛ր ի նընջել աչաց մա՛րմնոյ արթուն լինել մեզ քոտ հոգւոյ. զի՞ ի տուընջեան։

Տա՛ւն հոգւոյ բանաւորաց աղ֊ բիւր լուսոյ բաշխող շնորհաց. ի վակել դրանց բնութ֊ե՛ն մա՛րմնոց լո՛յս տուր աչաց սըրտից մերոց. ի դիշերաց առ քեզ կանխել ընդ հրեղինաց օրհնաբանել. զի՞ ի։

Սո՛ւրբդ սբց երրորդո՛ւթի ըզմեզ մաքրեա՛ քեզ բնակութի. շնորհեա ընդ մանկանցն առաքա՛ստել հանդ֊ էլ ընդ քեզ ի յանկողնի. տա՛ր ըզ հայցուած բարեկամին ըզխոս եչ

բից նըկանակին. զի՞ ՚ի։
Ե՛րեւելի լոյս լսասէզծեր զոխս և
զդիշէր բաժանեցեր. ծագեա մեզ
տէր ՚ի գի՞շէրի լըճառագայթս ինձ
նալի. տո՛ր յայմ ժամանակի զպահ-
պանող աչ.քո հովանի. զի՞ ՚ի։
Սիրոյ.քո հուր արկեալ յնէրկին բոր-
բոքեացի ՚ի հոգիս մեր. զխորհուրդ
սրբոյից մեր մաքրեսցե՛ զլոյս գիտու-
թեան.քո՛ փայլեսցե՛. ՚ի.քնոյ մա-
հա՛ն զմեզ զարթնո՛ւսցե՛ զմիաբան բո-
ցով.քո՛ վառեսցե՛. զի՞ ՚ի։
Ի՛.քեզ նայիմք լոյսդ անմահացոյց ՚ի
զգայական ծածկեալ լուսոյ. որ վա-
սըն մեր եգա՛ր ՚ի գբի և նըմնջեցեր
՚ի տապանի. ա՛ռ մեզ նըմնջեա ար-
թուն բնա՛թիւն հեղբեա զջարին
նեթգործուԹիւն. զի՞ ՚ի։
Լ՚ինդ լուսոյ անըստուե՛րի պաղատա-
նօք կամք առաջի. որ փակեալ
դրամբք յերեկոյին երև եցար մեծաս-
սանին. ընդ Թովմայի առ քեզ գո՛

ձեմք տէր և աստուածդ զքեզ դա-
ւանեմք. էի՞ջ և առ մեզ յերեկոյս
և տաւր զօրջոյն քո՛ի հոգիս։
Ամենալից զքեզ տէր ապաչեմք
մեզ յօդնուելմէն նայեա հայցեմք.
պահապանդ իսրայէլի անձանց մե-
ծոց լեր հովանի. ձիեա առ մեզ
խաղաղարար և նընջեցո՛ք անխռո-
վաբար. զի՞ ընդ առաւաւծոյս կա՛ն-
խեացուք օրհնել զքեզ ընդ հօր
հոգւովդ։
Պաշման վոզոյն գաբրիէլի որ ի
վերջնամէն գիշերի. լըսել արա՛
զմեզ աւրժանի և աջակողմն ծռեաց
դասի. անշէջ վառեալ լոյս լապ-
տերաց լաւ խնամատարն հինդ կո-
ւանաց. զի՞ ընդ մեռանիլ ի յա-
ռաւաւտ հարանէնք հոգւով մինդ
ցուք ի վառաս։
Հանգեա ի մէնջ տէր նըշանաձ
խաչի քո, զընդդիմամարտ և զա-
նեմոյիդ գազանն. և մի առր յա

արականաւթիւ զքո ժամանգուն՝ն,
Կամեսասեան վասըն մեր ամաձիւն
մարիամ. որ ծընար զտէր ամատրամ
որ հովսէփն զնէր. ա՛ժմենաքոյր
և սքանչելի վանաւքն խաչիկ։

Մաղթանք։

Տէր մի դարձուցաներ զերեսս քո
յինէն. ամէն բարեբար՝ ապաչեա
զքեզ, օգնական իմ լեր։ Տէր՝ մի
անտեսեր զիս. և մի թողուր զիս
աստուած փրկիչ իմ։

Քարոզ։

Աղաչեսցուք զամենակալն ամ, և
խնդրեսցուք՝ ի նմանէ, զի առաք
քեսցէ զհրեշտակ խաղաղութեան,
որ եկեալ պահեսցէ զմեզ յերկիւ
ղական պիշերյս, ի դիւականն խառն
վուխենէ՝ ամբողջ պահելով զհո
գի և զմարմին մեր մինչեւ ի կա
տարումն ժամանակի ամաց մերոց։
Ամենակալ տէր ամ մեր, կե։

Աղօթք։

Ընդհատու բարեաց՝ յամենայնի

առատ անմահ տէր, աղաչեմք ըզ քեզ՝ փարատեա յանձանց մերոց զաղջամղջին, և զխաւարային խորհուրդս։ Ի պատրանաց բանսարկուին պահեա զմեզ. և շնորհեա մեզ հաւատով ապաւինիլ յամենասուրբ երրորդութիւնդ՝ ի հայր և յորդի և ի սուրբ հոգիդ. այժմ և։

Յաւուրս աղաւհացի ասի Սմբիծքն՝ իսկ յաւուրս՝ Հայր մեր որ յերկինս։

Սաղմոս. ճԺը։

Բանեալ են անբիծք ի ճանապարհի, և որք գնան յօրէնս տեառն։ Երանի, որք քննեն զվկայութիւնս նորա. բովանդակ սրտիւ խնդրեսցեն զնա։ Ոչ թէ որք գործեն զանօրէնութիւն, ի ճանապարհս նորա գնացեն։ Դու պատուիրեցեր զպատուիրանս քո՝ ի պահել լինել յոյժ։ Երանի թէ յաջողեալ էին լինել ճանապարհք իմ, ի պահել լինել զարդարութիւնս քո։

Բայնժամ ես ոչ ամաչէի, ՚ի պատ-
ժանալ ինձ ՚ի պատուիրանս քո։
Խոստովան եղէց քեզ տէր յօրէ
զօրհնեան սրտի իմոյ, որպէս ուսայց
զիրաւունս արդարութեան քո։
Օ՛իրաւունս քո պահեցի. մի լա-
ցուր զիս միանչ իսաւս։
Ո՞ւ ողորմեսցէ երիտասարդ ըղձա-
նապարհս իւր, այլ ՚ի պահել ըզ-
բանս քո։
Ընդորում սրտիւ իմում խնդրեցի ըզ-
քեզ. մի մերժեր զիս ՚ի պատու-
իրանաց քոց։
Ի սրտի իմում ծածկեցի զբանս
քո, որպէս զի մի մեղայց քեզ։
Օրհնեալ ես դու տէր. ուսո ինձ
զարդարութիւնս քո։
Շրթամբք իմովք պատմեցից զամ
իրաւունս բերանոյ քո։
Ի ճանապարհս վկայութեանց քոց
զուարճացայ, ոպ չամ ՚ի մեծու։
Ի պատուիրանս քո հոգացայ. և
դժուշացայ ՚ի ճանապարհս քո։
Օ՛իրաւունս քո խօսեցայ, և ոչ մո-

ուցայ զանձս քո։
Հատո ծառայի քումմ, զի կեցից
և պահեցից զանձս քո։
Օրհնած առաջ իմ, և նայեցայց ՚ի
աբանելիս օրինաց քոց։
Պանդուխտ եմ ես յերկրի. մի թաք
գոյացաներ յինէն զպատուիրանս քո։
Փափաքեաց անձն իմ, ՚ի ցանկալ
ինձ յիրաւունս քո յամ ժամ։
Սաստեցեր ամբարտաւանից. անիծեալ՝ որք խոտորեցան ՚ի պատուիրանս քոց։
Ի քաց արա յինէն զնախատինս և
զարհամարհանս. զի զվկայութիւնս
քո լանպտեցի։
Պանդիկ նստան իշխանք՝ և չարախօսեին զինէն. այլ ծառայ քո խորհէր յիրաւունս քո։
Օ՛ի վկայութիք քո խօսք իմ էին. և
խորհուրդք իմ արդարութիւն քո։
Անբաժեցաւ անձն իմ ՚ի հող. տէր
կեցո զիս ըստ բանի քումմ։
Օ՛ճնութիս իմ պատմեցի քեզ, և լսեար ինձ. ուսո ինձ զարդարութիւն

Խոնարհեցո զխիտ իմ ՚ի վկայու-
թիւնս քոյ. զի ընդ նե հաճեցայ:
Ուսուցիներդ եա ինձ ՚ի շահիլս պատ-
ուիրանացդ քոց. զի ընդ նե հաճեցայ:
Ընդ ամենայն գործս քո ես ոչ
մոռացայ:
Ի ձանապարհս պատուիրանացդ քոց
ընթացայ. զի անդորր արարեր սիրտ
իմ իմոյ:
Օրէնսգէտ արա զիս տէր. ՚ի ճա-
նապարհս իրաւանց քոց. և խնդ-
րեցից զնա յամենայն ժամ:
Իմաստուն արա զիս. և քննեցից
զօրէնս քո, և պահեցից զնա բոլո-
րով սրտիւ իմով:
Ընաւիորդեա ինձ ՚ի շաւիղս պատ-
ուիրանացդ քոց. զի ընդ նե հաճեցայ:

թիւնս քո, և ամէն յաղագս թիւնն։
Դարձո զաչս իմ, զի մի տեսից զ-
նանրութիւն, ՚ի ճանապարհս քո
կեաց զիս։
Հաստատեա ծառայ քում՝ զբան
քո յերկիւղ քո։
Հան յինէն զնախատինս, զոր և
կարծեցի. զի դատաստանք քո քաղ
ցըր են։
Ահա ցանկացայ պատուիրանաց քոց,
յարդարութեան քում կեաց զիս։
Եկեսցէ ՚ի վերայ իմ ողորմութիւն
քո տէր. և փրկութիւն քո ըստ
բանի քում։
Տացէ պատասխանի զոր նախատեն
զիս բանիւք. զի եմ ՚ի բանս քո
յուսացայ։
Մի՛ ՚ի բացեայ առներ ՚ի բերանոյ
իմմէ զբան ճշմարտութեան մինչև
յոյժ. զի յիրաւունս քո յուսացայ։
Պահեցի զօրէնս քո յաւէտ ժամ, յաւի-
տեան՝ և յաւիտեանս յաւիտենից։
Գնայի ես յանդորրս. զի զպատո-
ւիրանս քո խնդրեցի։

խօսէի զվկայութիւնս քո առաջի
թագաւորաց, և ոչ ամաչէի։
Խորհէի ՚ի պատուիրանս քո զոր սի
րեցի։
Չամբարձի զձեռս իմ ՚ի պատուի
րանս քո՝ զոր սիրեցի. և խորհէի
յարդարութեանց քումմ։
Յիշեա զբան ծառայի քո, յոր և
յուսացուցեր զիս։
Սա մխիթարեցեալ զիս ՚ի խոնարհու
թեան իմում. զի բան քո կեցոյց զիս։
Ամբարտաւանք անիրաւեցան յիս
յոյժ, այլ յօրինաց քոց ես ոչ խո
տորեցայ։
Յիշեցի զկրաւունս քո յաւիտենից
տէր, և մխիթարեցայ։
Տրտմութիւն կալաւ զիս ՚ի մեղա
ւորաց, և ոչ թողին զօրէնս քո։
Գովելի են ինձ իրաւունք քո, ՚ի
տեղւոջ պանդխտութեան իմոյ։
Յիշեցի ՚ի գիշերի զանուն քո տէր.
և պահեցի զօրէնս քո։
Սա եղև ինձ ՚ի ճանապարհ ՚ի կեանս.
զի զարդարութիւնս քո խնդրեցի։

Բաժին իմ ես դու տէր, ասացի
պահել ինձ զօրէնս քո։
Ողորմեայ ինձ ըստ բանի քում։
Խորհեցայ ի ճանապարհս իմ. և
դարձուցի զոտս իմ ի վկայու-
թիւնս քո։
Պատրաստեցայ և ոչ խռովեցայ. ընդ
պահելի զպատուիրանս քո։
Տուուն ինձ մեղայ պատեցան զինև.
այլ զօրէնս քո ես ոչ մոռացայ։
Ի մէջ գիշերի յառնէի խոստովան
լինել առ քեզ, վասն իրաւանց և
արդարութեան քո։
Հաղորդ եմ ես ամենայն երկիւղա-
ծաց քոց. որոց պահեալ էին զը
պատուիրանս քո։
Ողորմութիւն տեառն լի եղև երկիր.
զարդարութիւնս քո ուսո ինձ։
Հաղորդութիւն արարեր ընդ ծառայ
քում տէր, ըստ բանի քում։
Ո՛րքաղցրութիւն, վարդան, և զխոստո-
վանութիւնն ուսո ինձ. զի ի պատուիրան-

Ներս քո ես հաւատացի։
Միևչև խոնարհեալ էի ես՝ մեղայ.
վասն այսորիկ զբանս քո պահեցի
յոյժ։
Բաղձր ես դու աէր, և քաղցրու-
թեամբ քով ուսո ինձ զարդարու-
թիւնս քո։
Խաղաղացան յիս անիրաւութիւնք
անբարեաւանից. այլ ես՝ բոլորով
սրտիւ խոով քննեցի զպատուիրա-
նս քո։
Ածան որպէս կաթին սիրտք նոցա.
այլ ես զօրէնս քո խօսեցայ։
Բարի է ինձ, զի խոնարհ արարեր
զիս. որպէս ուսայց զարդարութիւնս քո։
Բարի են ինձ օրէնք բերանոյ քո,
քան զհազարս ոսկւոյ և արծաթոյ։
Ձեռք քո արարին՝ և ստեղծին
զիս. խրատուն արա զիս՝ և ուսայց
զպատուիրանս քո։
Երկիւղածք քո տեսցեն զիս՝ և ու-
րախ եղիցին. զի ես՝ ի բանս քո
յուսացայ։
Ծանեայ աէր զի արդարութիւնք են

պատասխանք քո. յիւրաքանչիւր հանապազ
հեցուցեր զիս։
Եղիցի ողորմութիւն քո՝ ի մխիթարել զիս, ըստ բանի քում, զծառայ քո։
Ներեցեն յիս գթութիւնք քո՝ և կեցից. զի օրէնք քո խօսք իմ է։
Ամաչեցան ամբարտաւանք՝ որք՝ ի տարապարտուց անիրաւեցան յիս. այլ ես հոգացայ՝ ի պատուիրանս քո։
Խրատեցին զիս երկիւղածք քո, և որք ճանաչեն զվկայութիւնս քո։
Եղիցի սիրտ իմ անբիծ յարդարութեան քում. զի մի ամաչեցից։
Կարօտացաւ անձն իմ՝ ի փրկութիւն քո. զի ես՝ ի բանս քո յուսացայ։
Սպառեցին աչք իմ բանի քում. ասացի՝ երբ մխիթարեսցե զիս։
Եղէ ես որպէս սիկ՝ ի պարզի. զի զարդարութիւնս քո ես ոչ մոռացայ։
Քանի՞ հինչ են աւուրք ծառայի քո. երբ արասցես ինձ իրաւունս՝ ի հալածչաց իմոց։
Պատմեցին ինձ անօրէնք զխոհուրդս

տեցի զնա ձանապարհս չարաց. զի
դու օրհնագէտ արարիր զիս։
Ա՛րագ են բանք քո ոտից իմոց, և
լոյս տան շաւղաց իմոց։
Երդուայ և հաստատեցի. զի պա-
հեցից զամենայն իրաւունս ար-
դարութեան քո։
Խոնարհ եղէ մինչեւ յոյժ. տէր՝
կեցո զիս ըստ բանի քում։
Ընդ կամս բերանոյ իմոյ հաճեաց
ար. և զիրաւունս քո ուսո ինձ։
Ընձեռ իմ՝ի ձեռս քո է յանդ ժամ.
և զօրէնս քո ես ոչ մոռացայ։
Եդին ինձ մեղաւորք որոգայթ. ի
պատուիրանաց քոց ես ոչ մոլո-
րեցայ։
Ժառանգեցի զվկայութիւնս քո յա-
ւիտեան. զի ցնծութիւն է սրտի
իմոյ։
Խոնարհեցուցի զսիրտ իմ, առնել
զարդարութիւնս քո յաւիտեան,
վասն հատուցման։
Ոչանօրէնս ատեցի, և զօրէնս քո
սիրեցի։

Օդնական և փրկիչ իմ ես դու.
և ես ի քեզանէ քո յուսացայ։
Ի քաց եղերութ չինեն չարք. և
քննեցից զպատուիրանս այ իմոյ։
Օդնեա ինձ ըստ բանի քում, և
կեցո զիս. և մի յամեիր առնել զիս
ի յուսոյ իմմէ։
Օդնեա ինձ, և ապրեցո զիս. և
խոհեցայց յիրաւունս քո յամե-
նայն ժամ։
Ընարեցեր զամենեսեան՝ որք ա-
պստամբք եղեն յարդարութենէ
քոյ. զի անիրաւութեամբ էին
խորհուրդք նոցա։
Ցանցաւորս համարեցայ զնմա մե-
ղաւորս երկրի. վասն այսորիկ սի-
րեցի զպատուիրանս քո։
Ռեւեռեա ընդ երկիւղ քո զմար-
մին իմ. զի ի դատաստանաց քոց
երկեայց յոյժ։

Ը արարի իրաւունս և արդարու-
թիւն. մի մատներ զիս ի ձեռս
նեղչաց իմոց։

Ընկալ զծառայս քո ի բարի. զի մի
ամբարտաւանք զզուեսցեն զիս։
Սպասեցին աչք իմ փրկութեանդ քումմ
եւ բանից արդարութեան քո։
Արա ընդ ծառայի քումմ ըստ
ողորմութեան քումմ. զարդարու-
թիւնս քո ուսո ինձ։
Ծառայ քո եմ ես, իմաստուն ա-
րա զիս, և ծանեայց վկայութիւ-
նս քո։
Ժամ է պաշտել զտէր. խափանե-
ցին զօրէնս քո։
Վասն այսորիկ սիրեցի զպատուիրանս
քո, քան զոսկի և զտոպազիոն։
Վասնայն պատուիրանք քո յաջողե-
ցան ինձ. զի ատեցի ես զճանա-
պարհս չարութ։
Հրաշելի են վկայութիւնք քո, վա՛
յսորիկ սիրեաց զնոսա անձն իմ։
Յայտնութիւն բանից քոց լուսա-
ւորէ, և իմաստուն առնէ զտղայս։
Ջբերան իմ բացի, և առի շնչով.
ի պատուիրանս քո փափաքեաց
անձն իմ։

Նայեա առ իս և ողորմեա ինձ, ըստ
իրաւունս սիրողաց անուան քո։
Հաստատեսցես իմ ուղիղ ոտս ինձ
ըստ բանի քում. և մի՛ տիրեսցեն
ինձ ամենայն մեղք։
Փրկեա զիս ի դրպարտութենէ մարդ-
կան. և պահեցից զպատուիրանս քո։
Երեսեցո զերեսս քո ի ծառայս քո,
և ուսո ինձ զարդարութիւնս քո։
Վտակք ջուց իջին յաչաց իմոց.
զի ոչ պահեցին զօրէնս քո։
Արդար ես դու տէր, և ուղիղ
են դատաստանք քո։
Պատուիրեցեր զարդարութի՛ւն
յուլմեց քոց. և ճշմարիտ են յոյժ։
Ածէաց զիս նախանձ քո, զի մո-
ռացան զբանս քո թշնամիք իմ։
Ընտրեալ է բան քո յոյժ, և ծա-
ռայ քո սիրեաց զսա։
Անուկ եմ ես և արհամարհեալ.
և զարդարութիս քո ես ոչ մոռացայ։
Արդարութի՛ւն քո՝ արդարութի՛ւն յաւի-
տեանից. և օրէնք քո ճշմարիտ են։
Նեղութիք և վիշտք գտին զիս. և

պատուիրանք քո խօսք իմ էին։
Արդարութ՛ են վկայութիք քո յաւիտեան. իմաստուն արա և կեցո զիս։
Կարդացի առ քեզ բողոքով սրտիս իմով. լուր ինձ աեր, զի զարդարութիդ քո խնդրեցի։
Ողորմեցի առ քեզ՝ և փրկեա զիս. և պահեցից զվկայութիս քո։
Կանխեցի տարաժամս՝ աղաղակեցի. և ես ՚ի բանս քո յուսացայ։
Կանխեցին աչք իմ առաւօտու. ՚ի խօսիլ ինձ զբանս քո։
Ձայնի իմում լուր ՚ըստ ողորմութեդ քումմ. և յիրաւունս քո կեցո զիս։
Մերձեցուցին յիս հալածիչք իմ զանօրէնութիւն. զի յօրինաց քոց հեռի եղեն։
Մերձ ես դու աեր. և ամենայն պատուիրանք քո ճշմարիտ են։
Ի սկզբանէ ծանեայ ՚ի վկայութեանց քոց. զի յաւիտեան հաստատեցեր զնոսա։
